ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ
ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՑՈՒՄ 1879 ԱՄՍԻՆ

ԵՒՍՏ Գ.

18 ՄԱՅԻՍ 1879

Կ. ՊՕԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Մ. Կ. ՄԱՐԳԵԱՆ
1879

ԴԻՒԱՆՔ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՑ

ՄԱՑՐ ԴԻՒԱՆ

Գրիգոր էֆէնտի Օտեան — Ա. Ատենապետ
Տիգրան էֆէնտի Եուսուֆեան — Բ. »
Յարութիւն էֆէնտի Մէրեէմ-Գուլի — Գ. »
Մկրտիչ էֆէնտի Մէլիքեան — Ա. Ատենադպիր
Գասպար էֆէնտի Զերազ — Բ. »
Գարեգին էֆէնտի Մելիքեան — Գ. »

ՁԵՌՆՀԱՍՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

Խորէն Արքեպիսկոպոս Նար-պէյ
Յովհաննէս Քահանայ Մկրեան
Տիգրան էֆէնտի Եուսուֆեան

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

Սէրվիչէն էֆէնտի
Ստեփան փաշա Աղամեան
Գասպար էֆէնտի Զերազ

ԿԱԼՈՒԱՏՈՑ ԴԻՒԱՆ

Մինաս էֆէնտի Գափամաճեան
Յովհաննէս էֆէնտի Կրճիկեան
Արիկ էֆէնտի Ուռնեան

ՀԱՄԱՐԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

Ստեփան էֆէնտի Փափազեան
Քրիստոստուր էֆէնտի Ղազարոսեան
Համբարձում էֆէնտի Մազպուլեան

ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

Մկրտիչ էֆէնտի Դասեան
Բարսեղ էֆէնտի Հայաճեան
Պօղոս էֆէնտի Պուռնուտեան

ԻՐԱՒԱՑՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

Ներսէս վարդապետ Այվազեան
Սուքիաս էֆէնտի Այթուն-Տիրրի
Նշան էֆէնտի Օտեան

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

Տրդատ Ռափայէլեան էֆէնտի
Յարութիւն էֆէնտի Մէրեէմ-Գուլի
Մինչան էֆէնտի Զօպանեան

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

Կարապետ էֆէնտի Իւթիւճեան
Գարեգին էֆէնտի Մելիքեան
Համբարձում էֆէնտի Աբամաճեան

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ԲԱՑՈՒՄ 1879 ԱՄՍԷՆ

ՆԻՍՏ Բ.

18 ՄԱՅԻՍ 1879

ՆԱԽԱԳԱՀ. — Տ. Մատթէոս եպս. Իզմիրլեան (Գատր. փոխանորդ)
ԱՏԵՆԱՊԵՏ. — Տիգրան էֆ. Եուսուֆեան (Երկրորդ Ատենապետ)

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍԵՓՈԽԱՆՔ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՍԵՓՈԽԱՆՔ

ԵՊԵՂԵՑԱԿԱՆՔ

1. Խորէն Արքե. Նար Պէյ
2. Կարապետ Եպսկ. Սերոբեան Բ.
3. Մատթէոս „ Իզմիրլեան
4. Ամբրոսիոս Վ. Ռուբինեանց Բ. Պ
5. Գարեգին „ Թաքմարեան Բ. 2
6. Խորէն „ Կիրզիանց Բ. Պ
7. Յովհաննէս „ Փափազեան
8. Ներսէս „ Աբլանեան Բ.
9. Պօղոս „ Խօլտամեան
10. Իգնատիոս „ Շիրչեան
11. Վահան „ Տ. Մխիթարեան Բ. Պ
12. Յակոբ „ Ա. Փափազեան
13. Աբրահամէս Բ. Մամրէեան Բ. 2
14. Գէորգ „ Արծրունի Բ. 2
15. Գրիգոր „ Անէմեան
16. Խորէն „ Փէհլիվանեան
17. Յարութիւն „ Սերովբեան
18. Յովհաննէս „ Մկրեան
19. Սուքիաս „ Ստեփանեան Բ. 2
20. Սահակ „ Տ. Սարգսեան Բ.

ԱՇԽԱՐՀԱԿԱՆՔ

(Ա. Վիճակ)

Գումգապու, Կլտիկ փաշա և Գումգապուի դուռս

21. Գրիգոր Պէրպէրեան Բ. 2
22. Գէորգ Ստիմարաճեան
23. Խաչիկ Մանկասարեան Բ. Պ
24. Կարապետ Աղարդմանեան Բ. 2
25. Համբարձում Մազպուլեան
26. Մինաս Գափամաճեան
27. Յովհաննէս Պէյանեան
28. Ն. Մէզպուրեան Տաքթոր Բ. 2
29. Պօղոս Պառնասեան Բ. 2
30. Սարգիս Աղաբէկեան Բ. Պ
31. Սահակ Ակրօ Բ. Պ
32. Սենեքերիմ Մանուկեան Բ. 2
33. Բարթող Բիւրքմեսաչեան
34. Ատոմ Տէրզէնց Բ. 2
35. Գէորգ Ապտուլլահեան Բ. Պ
36. Յ. Մէրեէմ-գուլի
37. Աւետիս Կիրտաղեան Բ.

(Բ. Վիճակ)

Պէշիկթաշ

38. Անդրանիկ Կրճիկեան
39. Աւիտան Խօրասանճեան Բ. 2
40. Բարսեղ Հայաճեան Բ. 2

Էէնիգափու

41. Մկրտիչ Բիւրքմեսանլեան
42. Սեպուհ Մազմուտեան Բ. 2
43.
44.

Իւսկիւտար Ս. Խաչ

45. Սիմոն Ֆէլէկեան Բ. 2
46. Ստեփան Աբլանեան
47. Յ. Շիրմանեան Տաքթոր Բ.
48. Ս. Մէրեէմ-գուլի Բ. Պ

Իւսկիւտար Ս. Էլիսաւետ

49. Մինրան Պաշնէրաֆուլեան
50. Պօղոս Թորգոմեան Բ. 2
51. Նիկողոս Ալանճեան Բ. 2
52. Տրդատ Փափազեան

(Գ. Վիճակ)

Գասրմ փաշա

53. Գասպար Զէրազ

Բերա

54. Արիկ Ուռնեան
55. Գրիգոր Սէլիմիկեան Բ.
56. Գրիգոր Օտեան Բ.
57. Սէրվիչէն
58. Ռափայէլեան Տաքթոր
59. Միքայէլ Մոմճեան
60. Կարապետ Բազազեան Բ.
61.
62.

Միրզիուղ

63. Յակոբ Նորատունկեան
64. Տիրան Եուսուֆեան
65. Մկրտիչ Գազանճեան
66. Աւետիս Բոլոլեան Բ.
67. Նշան Օտեան

Պէյքոզ և Ղարաբիա

68.

(Դ. Վիճակ)

Զուզդուճուք և Իսմատիէ

69. Յովհաննէս Խաչեան Բ.
70. Ստեփան Գէյլիկեան

Բ. Բացակայութիւն առաջին։
Բ. 2 Բացակայութիւն երկրորդ։
Բ. Պ Բացակայ բանաւոր պատճառ։

Գատրգիւղ

71. Կարապետ Շահպազեան
72. Մկրտիչ Մուրատեան Բ. 2

Նարլրգատիու

73. Յակոբ Եղիազարեան

Լենինգրատի Սամարիոյ

74. Պօղոս Մկրտիչեան Բ.

Թօխգատիու

75. Յովհաննէս Մարգարեան

Լյուց Ս. Երդիս եւ Ս. Աստուածածին

76. Գարեգին Յ. Մելիքեան Բ.

Գուրուչիշմէ

77. Աստիա Իկիտպաշեան

Հիսար եւ Պոյատի գիւղ

78.

Նոր գիւղ եւ Արէնիս

79. Ղազար Հովուեան

Պալատ

80. Մկրտիչ Գ. Լեսեան
81. Յովհաննէս Կրճիկեան Բ. 2
82.

Բարակլօմրիկ

83. Յարութիւն Զէնգիրճեան Բ. 2
84. Սեդրակ Թիւրապեան

(Ե. Վիճակ)

Սամարիա

85. Աւիրան Պէշիրեան
86. Եղիազար Մելիքեան Բ.
87. Մինաս Ճաքճաքեան
88. Յակոբ Ամաեան Բ. 2
89. Նազարէթ Շահպազեան Բ. 2
90. Յարութիւն Թիւլեան
91. Յակոբ Արշակ Բ.
92.
23.
94.

Խասգիւղ

95. Աւաքիլ Աւետիս Տիրքի
96. Ռէթէոս Պէյլիկճեան
97. Սարգիս Աբրահամեան
98. Մ. Աւծրունի Տօրթոր
99. Սարգիս Քավուզճեան
100. Աթանագինէ Արապեան

ԳԱՒԱՌԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆՔ

Կարին

101. Արմեն Մազաուտեան Բ.

Բէլօբահնա

102. Մ. Փափազեան Տօրթոր

Ակդրիանապոլիս

103.

Նիկոմիդիա

104. Կարապետ Ս. Իսթիմեան

Ակն

105.

Զարահիսար

106.

Արաբկիր

107. Կարապետ Խաչիկեան

Բաղէշ

108

Պրուսա

109. Քրիստոստուր Ղազարոսեան

Եւդոկիա

110.

Ամասիա

111. Համբարձում Ալճաճեան

Բարտ

112. Յովհաննէս Աղնաւորեան

Երզնկա

113. Յակոբ Իսթիմեան

Մանիսալիա

114.

Հսամբն

115.

Երզնկա եւ Բարերդ

116.

Թէքիրտաղ

117. Տիգրան Գ. Սինանեան

Կեսարիա

118. Գէորգ Գէլճեան

Խարբերդ

119.

Պալքիսեսիր

120.

Մուշ

121. Ստեփան Փափազեան

Տիվրիկ

122. Նշան Գարագաշ Բ. 2

Զէյթուն եւ Մարաշ

123.

Տրապիզոն

124. Տիգրան Տ. Ներսէսեան Բ.

Պաղտատ

125. Մելքոն Իսկենտէրեան Բ.

Տիգրանակերտ

126. Մինրան Զօրանեան

Վան

127.

Աղթամար

128.

Հալէպ եւ Այնթապ

129.

Սեբաստիա

130. Մկրտիչ Յ. Մելիքեան

Ռուսնուխ

131.

Կարս

132. Աբրահամ Յ. Այվազեան

Զմիւռնիա

133. Համբարձում Սարգսիչեան

Գաղատիա

134

Աստանա

135

Սղերդ

136. Մատթէոս Ալիքսան

Եոզգատ

137. Լեւոնիթ Պալեօզեան Բ. Պ

Մարսիլիա

138. Գէորգ Վարդանեան

Իզմիր

139. Պապի Պապոեան

Եգիպտոս

140

ՕՐԱԿԱՐԳ

Ա. Կաղմութիւն Նախաքննիչ դիւանաց։

Բ. Առաջարկութիւն երկուց երեսփոխանաց վասն ընտրութեան Քննիչ Յանձնախմբի քննչացն ի Հայաստան,

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆԸ

Ի բացակայութեան Ս. Պատրիարք Հօր՝ Նորին Փոխանորդ Իշխիրլեան Տ. Մատթէոս Սրբազանի առաջամեայ նախագահութեամբ Ատեանը բացուեցաւ ժամ 3ին 7ին, ի ներկայութեան 35 երեսփոխանաց, որոց թիւը 63ի յանգեցաւ ի վերջէ։

Զ.

Բնդունելութիւն նախընթաց իԱ. իբ. և Նոր թացման Ա. նիստերու Ատենագրութեանց

Ատենապետ էֆէնտին յայտարարելով թէ ժողովին նախընթաց Ա. նիստի ատենագրութենէն զատ՝ նաև նախորդ տարեկան շրջանի իԱ. և իԲ. նիստերու ատենագրութիւններն կան՝ դեռ ևս անխաւեր ժողովէն, նախ՝ իԱ. նիստի ատենագրութեան վրայ ի դիտողութիւն հրաւիրեց երեսփոխանները, սակայն որևէ դիտողութիւն տեղի չունենալով՝ Ատենապետ էֆէնտին քուէի դրաւ զայն և ժողովը միաձայն ընդունելով ՎԱՒԵՐԱՑՈՒՑ սոյն ատենագրութիւնը։

Երկրորդ՝ դիտողութեան դրուեցաւ իԲ. նիստի ատենագրութիւնը։

ՄԵՐԵԷՄ-ԳՈՒԼԻ Ց. ԷՖ. — Նիստ իԲ. երես 497. սիւնակ Ա. խօսքիս չորրորդ տողին պարունակութիւնը սապէս պիտի ըլլայ.

«Վիճաբանութեան դռները գոցելու նը-պատակաւ պիտի խօսիմ, այժմ ալ կրսեմ թէ վիճաբանութեան ի նորոյ տեղի տալու հարկ չեմ տեսներ։»

Եւ ուրիշ դիտողութիւն տեղի չունենալով՝ Ատենապետ էֆէնտին քուէի դրաւ իԲ. նիստի ատենագրութիւնն և ժողովը միաձայն

ընդունելով ՎԱՒԵՐԱՑՈՒՑ զայն՝ եղած դիտողութեամբ հանդերձ։

Երրորդ դիտողութեան դրուեցաւ Նախորդ Ա. Նիստի ատենագրութիւնը։

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Նիստ Ա. Երես 23. սիւնակ Բ. խօսքս այսպէս պիտի ըլլայ. «Այդ տեղեկագիրը թերի է. Գաւառական ժողովը քանի՞ անչամով ատեան բացած է և քանի քուէ ստացած է ընտրեալը, Նշանակուած չէ»։ Եւ դարձեալ՝ երես 26. Ա. սիւնակ. խօսքս այսպէս պիտի ըլլայ, «Կը տեսնէք որ 190 եկեղեցականներէն 145ը մասնէք որ 190 եկեղեցականներէն 145ը մասնակցեր են քուէարկութեան, ըստ որում 75 ղրչի տրոց կապէն ազատ են. եթէ այս 75ի կապը վերնայ, ամէն տեղ ընտրողաց թիւը կը բազմապատկի։»

ԱՏԵՆԱԳՈՒՐ ԷՖ. — Ես ալ իմ կողմէս կը փութամ ուրիշ սխալ մ'ուղղել. երես 15 սիւնակ Բ. Յարութիւն էֆ. Մէրեէմ-Գուլի «գրագիր» նշանակուած է սխալմամբ՝ փոխանակ «վաճառական» գրուելու։

Եւ ուրիշ դիտողութիւն ընող չըլլալով՝ Ատենապետ Էֆէնտին քուէի դրաւ նաև Նախընթաց Ա. Նիստի ատենագրութիւնն և Ժողովը միաձայն հաւանութեամբ ՎԱՒԵՐԱՑՈՒՑ զայն՝ եղած դիտողութեամբ հանդերձ։

ԱՐԱՊԵԱՆ Ա. ԷՖ. — Խօսք խնդրեցի ընորհակալիք յայտնելու համար այս պատկառելի Ժողովին, որ հաճեցաւ իմ ընտրութիւնս վաւերել, և իրեն անդամակցելու պատիւն ընծայել ինձ։ Այս Ժողովին կոչումն է Ազգին վերածնութեան միջոցներն հեղինակել և տիրկել զայն։ Ուստի ես ևս իմ կողմէս վաստակակցելու համար իր ջանից՝ Ազգին յառաջդիմութեանը վերաբերող խնդրոյ մը վրայ խորհած և առաջարկութիւն մը պատրաստած եմ, զոր գրաւոր կը ներկայացնեմ ձեզ ահաւասիկ։

Եւ Այրապետեան էֆ. յանձնեց Դիւանին իր առաջարկութեան յօդուածիրը։

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ժողովս ուրախութիւն կրգայ տեսնելով որ Ազգն այնպիսի անդամակից մը կուզարկէ իրեն, որ հազիւ երեսփոխան ընտրուած՝ ազգին ծառայելու փափաքանօք՝ իր հետ առաջարկութիւն մը կը բերէ. սակայն նորընտիր երեսփոխան էֆէնտին պէտք է սպասէ որ ըստ օրինի իր առաջարկը մնայ առ այժմ Դիւանին վրայ, և իր կարգին ներկայանայ Ժողովին։

ԱՐԱՊԵԱՆ Ա. ԷՖ. — Շատ ողէկ։

Զ.

Հրաժարագիր Առաջին Ատենապետի

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ատենական գործոցութեանց վերաբերեալ թղթոց մէջ՝ ցաւօք կը գտնեմ Ժողովոյս առաջին Ատենապետին, Վսեմ. Օտեան էֆէնտիի հրաժարագիրը և ահաւասիկ կը ներկայացնեմ զայն ձեր ուշադրութեանը։

Ատենադպիր էֆ. ընթերցաւ հրաժարագիրը, որ ահաւասիկ։

24/12 Մայիս, 1879 Բերա

Ամեն. Ս. Նախագահ

Բարեկամք և օրագիրն Մասիս աւետեցին ինձ զանուանումն իմ յատենապետութիւն Ընդ. Ժողովոյ։ Յետ բազմամեայ բացակայութեան ի ծոցոյ Ազգ. Երեսփոխանութեան, ինչ մեծ մբախիթարութիւն ինձ համար որ հաղիւ անդամ ընտրուած՝ ընտրուիմ նաև նոր-ին գլուխ իր Դիւանին։ Երբ ազգային Երեսփոխանութիւնը և ի նա Ազգը այսպիսի պատիւ մը կընէ ինծի, կը մոռնամ սիրտս մտածելով թէ բացարձակ անձնուիրութենէս զատ ուրիշ արժանիք մը ունեցած չեմ և չունիմ։

Քանի առաւել ցաւ է ինձ որ յետ վայելելու զայս պատիւ՝ պարտաւորեալ եմ հրաժարելու պաշտօնէն։ Այլ եթէ ազգային Երեսփոխանութիւնը կը հաւատայ թէ մինչև հիմա իմ անձնուիրութիւնս չը ստեց Ազգին, կընդունի նաև հրաժարականս հաւատալով, առանց վիճաբանութեան, որ անկարելի է. թէ դ-ը-դ-ե-ի-ն հ-ա-յ-ր-է։ Շատ է եթէ յաջողիմ ոչ սուղ ժամանակ իբր երեսփոխան ծառայել Ազգին։

Եւ արդ զի կը հաճի Ընդ. Ժողովը որ մնամ երեսփոխան, կը ներէ արդեօք որ իբր այն՝ յայտնեմ իմ ցաւս տեսնելով Ատենապետի աթոռը որ կը զրկուի այն անձէն, որ այնքան տարիներ վարեց ատենապետութեան պաշտօնը, այնքան տաղանդով ու այնքան իմաստութեամբ, որ իր անկապտելի յատկութիւններն են և անտարակոյս նաև անաչառ անկողմնակալութեամբ, որ ամէն ատենապետի առաջին պարտաւորութիւնն է։ Ո՛րչափ սիրելի և փափաքելի ինձ համար և յուսամ բոլոր երեսփոխանաց համար, իրմէ միայն առաջնորդուիլ մեր վիճաբանութեանցը մէջ, վիճաբանութիւնք որ աներկմիտ եմ թէ խաղաղական և միայն օգտակար պիտի ըլլան ազգին համար։

Մնամ Ամենապատիւ Սրբազնութեանդ և Ամենասիրելի Հօրդ

Ամենախոնարհ ծառայ և
խանդակաթ որդի
Գ. Ս. ՕՏԵԱՆ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ժողովը տեղեկացաւ այժմ հրաժարագրին պարունակութեանը. ուստի կը խնդրեմ որ հաճի այս մասին իր կամքը յայտնել։

ԱՐԱՊԵԱՆ Ա. ԷՖ. — Ատենապետութեան պաշտօնէն Օտեան էֆէնտի կը հրաժարի, սակայն առանց բանաւոր պատճառ մը մէջ բերելու։ Եւ որովհետև Ժողովն կը ճանչնայ իր արժանիքը, ուստի կառաջարկեմ՝ չընդունիլ իր հրաժարելը, եթէ կարելի է, և այնքան որ շնորհ ընէ յանձն առնուլ իր պաշտօնը։

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Երբ Ազգային Ժողովն Օտեան էֆէնտին կը կոչէր ի պաշտօն ատենապետութեան, զինքն ընտրողաց մէջ կը գտնուէր նաև այն անձն, որ այնքան երկար ատեն վարած էր այս պաշտօնը և զԺողովը գոհ ըրած էր կատարելապէս իր իմաստութեամբն ու անաչառութեամբը։ Նախքան զբուէարկութիւն՝ նոյն ինքն Ստեփան Փաշա՝ մեզի հետ համամիտ էր այս ընտրութեան, և եռանդեամբ կը ցանկար որ այս պատիւն ընենք Օտեան էֆէնտիի՝ իր արժանեացը համար։ Սակայն այժմ կը հրաժարի նա Ատենապետի աթոռէն, և փափաք կը յայտնէ որ Ազգային Ժողովն առանց վիճաբանութեան ենթարկելու խնդիրը՝ հաւանի իր հրաժարումին։

Մենք սոսկ ենք արդէն հնազանդիլ մեր Ատենապետոց ձայնին. ուստի կառաջարկեմ որ հնազանդութեան նախընթաց օրինակ մը տալով մեր նորընտիր Ատենապետին՝ վիճաբանութեան չենթարկենք այս խնդիրը, բայց չէ թէ իր հրաժարումին հաւանելու, այլ զայն չընդունելու համար։ Այս որոշումը տալով՝ կը յանձնենք Նախագահ Սրբազանին և Մայր Դիւանին որ Նորին Վսեմութեան երթան հաղորդեն Ազգային Ժողովոյ որոշումն և փափաքը, և աղաչեն զինքը որ հաճի ծառայել այս պաշտօնը, զոր այնքան վարտհութեամբ կատարեցինք իրեն։ Իսկ եթէ իր հրաժարման պատճառները լսելով համոզուին որ արդարև անհնար է անոր պաշտօնավարութիւնը, այն ատեն՝ ի հարկէ՝ Ազգային Ժողովոյ ուրիշ բան չմնար ընել, բայց եթէ՝ նոր ընտրութիւն կատարել, հետևապէս այս վերջին պա-

բագային մէջ խնդիրը կանցնեն յաջորդ Նիստին օրակարգն իբրև առաջին խնդիր։

ԻՒԹԻՒՃԵԱՆ Կ. ԷՖ. — Կը ճանաչցիմ այս առաջարկութեան։

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Քուէի դրէ՛ք։

Եւ Ս. տենապետ էֆէնտին քուէի դնելով այն առաջարկը՝ Ժողովը մեծամեծ հաւանութեամբ կը մերժէ Ս. տենապետ Օտեան էֆէնտիի հրաժարականը, և կը յանձնէ Սրբազան Նախագահին և Մայր դիւանին որ Ժողովին որոշումը տանելով Նորին Վսեմութեան՝ կրկին հրաւիրեն զինքը ի պաշտօն ատենապետութեան։ Իսկ եթէ անհնար լինի Օտեան էֆէնտիի պաշտօնավարութիւնը, նոր ընտրութեան խնդիրն անցնեն յաջորդ նիստին Օրակարգին գլուխը։

Յ.

Ազգային վարչութեան կրկին յայտագրերը

Ս. տենապետ էֆէնտին յայտնելով թէ Քաղ. և խառն Ժողովոց կողմէ երկու յայտագիր կայ եկած, ժողովին ուշադրութեանը յանձնեց, հրաւիրելով Ս. տենադպիր էֆէնտին ընթեռնուլ զանոնք։

Յայտագիր Ազգային Ժողովի Եղմտեան մասնախմբին կազմութեան խնդրոյն վրայ

Վսեմափայլ Ատենապետ
Ազգային Ժողովոյ

Ազգային Ժողովոյ ատենագրութեանց խմբագրութեան մասին՝ պատուարժան Մայր Դիւանիդ կողմէ ուղղեալ Մարտ 9 ամսաթուով գրութիւնը Քաղ. Ժողովը այս անգամ ուշադրութեան առնելով՝ հարկ տեսաւ որ Ազգ. Ժողովոյ թէ ատենագրութեանց խմբագրութեան, թէ տպագրական և թէ ուրիշ այս տեսակ գործերը կանոնաւոր և Մայր Դիւանի փափաքած կերպովը կատարուելու համար պէտք եղած ծախուց գումարը վճարուի կեդր. մնտուկէն, և այս ծախքերը մատակարարուին Ազգ. Ժողովոյ կողմէ կարգեալ Ելևմտից մասնախմբի մը ձեռօք. ինչպէս 1877 յունիս 3 Նիստին մէջ Ձեր Վսեմութեան կողմէ առաջարկուած և Համարակալութեան գիւանին կողմէ պատշաճ և օրինաւոր դատուելով Ազգ. Ժողովոյ որոշման ենթարկեալ էր։ Հետևապէս Քաղ. Ժողովը Պատուարժան Մայր Դիւանիդ՝ վերապահելով ատենագրութեանց խմբագրութեան վերաբերեալ պէտք եղած կարգադրութիւնը, կը խնդրէ որ բարեհաճի Ազգ. Ժողովը յիշեալ առաջարկութեան նկատմամբ իւր որոշումը փութացընել, և սահմանելով ինչ գումար որ պէտք է, ստանայ զայն կեդր. մնտուկէն, իր ներքին ծախքերը տնտեսելու համար ինչ կերպով որ ինք արժան դատի։ Մնամ աղօթարար

11 Մայիս 1879 Պատր. Փոխանորդ
ՄԱՏԹԷՈՍ ԵՊԻՍ. ԻԶՄԵՐԼԵԱՆ

ԱՏԵՆԱԴՊԻՐ ԷՖ. — Սակէ քանի մ՝ամիս առաջ՝ Վսեմ. Ստեփան փաշայի ատենապետութեան օրով՝ Մայր դիւանը հարկ ղդաց Ժողովոյն ատենագրութիւնները կանոնաւոր վիճակի մը վերածելու և անոնց խմբագրութիւնը խնամով կատարելու համար Պատրիարքարանի դիւանատուն անդամներէն մին սահմանեց և Քաղ. Ժողովոյ գրելով, այս անօրինութեան գործադրութիւնը խնդրեց, որուն ի պատասխան Քաղ. Ժողովը այսօր սոյն յայտագիրը կուղղէ։ Իրրեւ Ս. տենադպիր՝ Ժողովոյն մասնաւորապէս կը խնդրեմ որ այս մասին իւր տնօրէնութիւնը փութացնէ. վասն զի այս վիճակին մէջ կարելի չէ Ժողովդ գոհ ընել ատենագրութեանց խմբագրութեան և տպագրութեան մասին, և ինձ նաև շարունակաբար պաշտօն վարել։

Ճշմարիտը խօսելով եթէ երբէք մտաբերած եմ հրաժեշտ տալ այն պաշտօնէն, պատճառներէն մին և ամենէն գլխաւորն այս եղած է. ուստի կը խնդրեմ որ Ժողովը Վարչութեան սոյն առաջարկութեան ստիպողութիւն տալու շնորհն ընէ։

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Ս. յդ յայտագրին մէջ ակնարկուած Յանձնաժողովը դեռ ոչ իսկ կազմուած է. ուստի կը մտածեմ որ արժան է խնդիրն օրաձգել, մինչեւ որ գէթ Մայր դիւանն իւր ամրողջութիւնն ստանայ։ Բայց վասն զի Ս. տենադպիր էֆէնտին ստիպողութիւն կընծայէ գործին՝ մանաւանդ ատենագրութեանց խմբագրութեան մասին, որ ոչ նուազ կարեւորութիւն ունի Ժողովոյն համար, ուստի կառաջարկեմ որ Քաղ. Ժողովը մինչեւ խնդրոյն վերջնական կարգադրութիւնը՝ շնորհ ընէ խնամ տանիլ այս մասին, և պէտք եղած յանձնարարութիւնն ընել որու որ անկ է։

ՄԷՐԵԷՄ-ԳՈՒԼԻ Ց. ԷՖ. — Ս. յն պարագայէն զատ՝ որու վրայ դիտողութիւն ըրաւ Փափազեան էֆէնտին, ուրիշ կէտ մ՝ալ կայ, որ նոյնչափ և թերեւս աւելի արժանի է ուշադրութեան։

Խնդիրն ոչ միայն Մասնախմբին կազմութեան, այլ նաև Ազգային ժողովոյ ներքին ծախուց համար գումար մը սահմանելու վրայ է, և այս պարագային մէջ հարկ կը լինի անշուշտ խնդիր յղել նախապէս Համարակալութեան դիւանին, որպէս զի ստուգէ թէ Ազգ. Ժողովն իւր ատենագրութեանց խմբագրութեան, իւր տպագրական գործոց, և իւր զանազան ուրիշ պիտոյից համար օ՛րքան ծախուց կը կարօտի, և ըստ այնմ սահմանելով պէտք եղած գումարը՝ տեղեկագրէ Ազգ. Ժողովին, որպէս զի Ազգ. Ժողովն ևս կարենայ գիտակցութեամբ որոշում մ՝ընել։ Ուստի ըստ իս պէտք է խնդիրը յանձնել Համարակալութեան դիւանին, որուն տեղեկագիրը մինչեւ ներկայանայ Ժողովոյն, կամրողջանայ անշուշտ Մայր դիւանն և ուրիշ պէտք եղած պատրաստութիւններն կը լինին, որով խնդիրն իւր ամէն մասունքներով լուծուած պարզուած՝ կատանայ իւր որոշումն։ Իսկ մինչեւ ցայն կէտ Քաղ. Ժողովն անշուշտ՝ չը խնայեր Ս. տենադպիր էֆէնտիի խնդրած դիւրութիւններն ընծայել, որպէս զի նա ևս ազատի այն դժուարին պարագաներէն, որք կը պաշարեն զինքը իւր պաշտաման մէջ։

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Գ. ԷՖ. — Ս՛յտ, պէտք է յանձնարարել Վարչութեան որ օգնէ Ս. տենադպիր էֆէնտիին, և զայն դժուարութեանց ձեռք չմատնէ։

ԱՏԵՆԱԴՊԻՐ ԷՖ. — Շնորհակալ եմ։

ԱՍԼԱՆԵԱՆ Ս. ՓԱՇԱ. — Ս. յն առաջարկն զոր Քաղ. Ժողովը կը յիշեցնէ մեզ իւր յայտագրովը, ժամանակաւ դիւանին կողմէ ներկայացաւ Ազգ. Ժողովին և ծանուցուեցաւ նաև ընդ նմին Վարչութեան։ Ազգ. Ժողովը կը յիշէր անշուշտ, յղեց խնդիրը Համարակալութեան դիւանին, որոյ տեղեկագիրը գալով անցաւ Ժողովին խնդրոյ կարգը. իսկ Վարչութեան պատասխանը չորս հինգ ամիսէ ետեւ հաղիւ ուրեմն կուգայ մեզ այսօր։ Ս. յլ սակայն Վարչութիւնը կը հաւանի այդ առաջարկութեան, և կը յայտարարէ թէ պատրաստ է վճարել Ազգ. Ժողովոյ պիտոյից համար ինչ գումար որ հարկաւոր է, և յանձնաժողով մը ցոյց տուէք, կըսէ, որ անոր յանձնեմ այդ գումարը, որով մատակարարուին ձեր ծախքերը ձեր ուզած կերպով։ Եւրոպական ազգայ խորհրդարաններու ներքին պիտոյքներն ալ այս տեսակ ինքնուրոյն Յանձնաժողովներու ձեռօք կը մատակարարուին, և ճշմարիտը խօսելով ամէնէն աղէկ դրութիւնն այս է Ազգ. Ժողովոյ գէտքերն անվրէպ և կանոնաւոր կերպով հոգալու համար։ Զէ՞ք յիշեր արդեօք որ քանի մը պարագաներու մէջ, երբ Ազգ. Ժողովոյ համար գրասեղան և աթոռ պէտք եղաւ ինչ դժուարութեանց հանդիպեցանք։ Զորս կողմ դիմեցինք, և Վարչութիւնը՝ բաղմաղաղ՝ իւր բաղմաթիւ խնդրոց մէջ՝ հաղիւ ուրեմն ժամանակ գտաւ այս խնդիրը նայելու և հրամայեց վերջապէս որ Կեդր. մնտուկը հոգայ այդ

պէտքերը։ Ուրեմն քանի որ Վարչութիւնն այս առաջարկութեան կը հաւանի, որու յարած է արդէն նաև Համարակալութեան դիւանն, ոչ այլ ինչ կմնայ մեզ ընել, այլ կարգել այդ յանձնաժողովը, և կանոնաւորել Ազգ. Ժողովոյ պիտոյից տնտեսութիւնը, մանաւանդ որ Ատենապետիր էֆ. բացարձակ ստիպողութիւն կընծայէ խնդրոյն։

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Խնդրոյն վրայ թերու դէմ խօսուեցաւ, ստիպողութիւն կամ օրաձգում, այս երկու կէտերու կը յանգին կարծիքները. ուստի քուէի պիտի դնեմ։

ՄԷՐԵԷՄ-ԳՈՒԼԻ Ց. ԷՖ. — Ես չեմ հակառակիր բնաւ Եկմնական մասնախմբին կազմութեան, և կատարելապէս կըմբռնեմ այն պատճառներն որք կը հարկադրեն զմեզ Ազգային Ժողովոյ պիտոյից տնտեսութիւնը կանոնաւորել մասնախմբի մը յանձնելով զայն, սակայն որպէս զի Ժողովը կարենայ որոշ հիման վրայ պէտք եղած տնօրինութիւնն ընել, հարկ է միշտ որ խնդիրը Համարակալութեան դիւանին ձեռքը պարզուելէ ետեւ՝ տեղեկագրով մը ներկայանայ մեզ։

ԱՍԼԱՆԵԱՆ Ս. ՓԱՇԱ — Համարակալութեան դիւանին երբ տեղեկագիր մը յղուի թիւ պէտք է դտնուի մէջը, վասն զի անոր գործը, ինչպէս դիւրին է անունէն ըմբռնել, թուի և հաշուոյ հետ է, և ինչ պիտի ուզենք իրմէ երբ թիւ չկայ այս խնդրոյն մէջ, զոր իրեն յղել կուզէք։ Վարչութիւնը սկզբամբ կընդունի Ազգ. Ժողովոյ պիտոյից մատակարարութեան բաժանումը Պատրիարքարանի ծախքերէն, և պատրաստ եմ, կըսէ, վճարելու պէտք եղած գումարը, կը բաւէ ուրեմն որ առաջարկեալ Յանձնաժողովը կազմուի։

ՄԷՐԵԷՄ-ԳՈՒԼԻ Ց. ԷՖ. — Կը տեսնեմ որ քանի մը բացատրութիւն տալ հարկ է ինձ, լուսաւորելու համար խնդիրը։ Վարչութեան բերելիք հաշուեկշռին մէջ ենթադրենք թէ ծախուց գլուխ մը կայ՝ ընդհանուր տպագրական պիտոյից, և ուրիշ գլուխ մը կայ՝ զանազան ընդհանուր ծախուց յատկացեալ։ Կեդրոնական անտուկի ելից այս կրկին գլուխներուն մէջ պէտք է փնտռել ի հարկէ Ազգ. Ժողովոյ պիտոյից պահանջած գումարը, բայց միևնոյն գլուխներուն մէջ են անշուշտ Վարչութեան վերաբերեալ այս կրկին տեսակ ծախուց գումարներն ալ, ո՞վ պիտի որոշէ և բաժնէ Ազգ. Ժողովոյ ծախուց բաժինը Վարչութեան մասէն, — անշուշտ Համարակալութեան դիւանը։ Սոյգ է որ Վարչութիւնը կը հաւանի պէտք եղած ծախքերը տալու, սակայն ինք չը սահմաներ գումարին քանակութիւնը, և Ազգային Ժողովոյ կը թողու զայն որոշելը։ Ի հարկէ՝ Բաղ. Ժողովն որքան ալ նպաստաւոր տրամադրութիւններ ունենայ այս խնդրոյն մէջ, Ազգ. Ժողովն Վարչութեան դրամական կարողութենէն վեր պահանջում մը չըներ անկէ, այլ ի հաշիւ պիտի առնու ճշդիւ իւր պիտոյքները և ըստ այնմ պիտի սահմանէ պէտք եղած գումարը. ահաւասիկ ուրիշ պարագայ մ՚ևս ուր դարձեալ կերեւի Համար. դիւանին միջամտութեան պէտքը. ուստի միշտ լաւագոյն և բանաւոր կը տեսնեմ յղել խնդիրը Համարակալութեան դիւանին, որ մինչեւ ցարդ Ազգ. Ժողովոյ պիտոյից համար եղած ծախքերը կը քննէ, պիտոյքները կը ճշդէ, և Ազգ. անտուկին կարողութեանց համաձայն կը սահմանէ ինչ գումար որ պէտք է, և այսպէս խնդիրը լուսաբանուած վերադառնալով Ժողովոյս, հեշտիւ կը գտնէ իւր լուծումը։

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Բաւական վիճաբանուեցաւ խնդրոյն վրայ, և այլ ևս հասած կը տեսնեմ զայն քուէարկելու վայրկեանը։ Երկու կարծիք կայ, մին կուզէ խնդիրը Համամարակալութեան դիւանին յղել, և միւսը՝ ստիպողութիւն ընծայելով Վարչութեան յայտարարին՝ Մասնախմբին կազմութիւնը կատարել, այսօր կամ յաջորդ նիստին, ինչպէս որ յարմար դատուի։ Եւ արդեօք Վսեմ. Ստեփան Փաշան՝ Մէրեէմ-Գուլի էֆէնտիի տուած վերջին բացատրութեանց վրայ կը համաձայնի՞ անոր հետ։

ԱՍԼԱՆԵԱՆ Ս. ՓԱՇԱ. — Գոհ եմ որ կը հաւանիր իմ կարծիքս հարցնել. փասն զի այս խնդրոյն վրայ երկու անգամ խօսք առեր էի արդէն, և կանոնը չէր ներէր ինձ անգամ մը ևս խօսիլ։ Իմ դիտաւորութիւնս է խնդիրը գործնական ճամբու մէջ դնել, և այս նպատակաւ է որ կուսակցարկեմ Յանձնաժողովին կազմութիւնն ընդունիլ, և միւս կողմէ յանձնարարել Վարչութեան որ պէտք եղած գումարը սահմանել։ Վարչութիւնը վճռական տեղեկագիր մը կուտայ և դործը կը կարգադրուի Վերջապէս այսպէսով կընդունուի սկզբունքը, և գործադրութիւնը կը յետաձգուի։

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Հիմա կրցի խնդիրն իւր ամբողջութեամբ ըմբռնել և միջոց մը գտայ անոր լուծումը դիւրելու համար։ Սրդ՝ կուսակցարկեմ Եկմնական Յանձնաժողովոյ կազմութեան սկզբունքն ընդունիլ. և միանգամայն յանձնարարել Համարակալութեան դիւանին, որ Վարչութեան հաշուեկշիռը բնած առեն՝ սահմանել նաև Ազգային Ժողովոյ պիտոյից համար հարկ եղած գումարին քանակութիւնն, և հաշուեկշռին տեղեկագրովը բերել խնդիրն Ազգային Ժողովին։

Ատենապետ էֆէնտին այն առաջարկը բաւէ դրաւ և Ժողովն վիճաձայն հաւանութեամբ ԸՆԴՈՒՆԵՑ զայն։

Յայտագիր Կարսայ և Բուսնուտի վիճակաց երեսփոխանական ընտրութեանց մասնակցութեան խնդրոյն վրայ

Վսեմափայլ Ատենապետ
Ազգային Ժողովոյ

Օսմանեան երկրին մէջ կատարուած վերջին աշխարհագրական փոփոխութեանց վրայ Կարսայ վիճակին կողմէ ընտրեալ երեսփոխանին ամիսը թափուր մնալով Ազգային Ժողովոյ մէջ, Վարչութեան Խառն Ժողովը սոյն պակասը լրացընելու, և երեսփոխանաց օրինական թիւն իւր ամբողջութեան մէջ պահելու համար՝ Բաբերդի և Երզնկայի վիճակներն՝ որ ըստ նախորդ բաշխման միացեալ կընտրէին իրենց երեսփոխանն, անջատեց իրարմէ, և սոյն երկու վիճակաց առանձինն մէկմէկ երեսփոխան ընտրելու իրաւունք վերադրեց։ Իսկ Բուսնուտի վիճակը՝ սրու նկատմամբ Ազգ. Ժողովոյ անցեալ նիստին մէջ հարցում տեղի ունեցաւ, թէև վերջին պատերազմէն ետեւ՝ Պուլկարիոյ մէկ գաւառը կը կազմէ, բայց ըստ որում Պուլկարական նորահաստատ իշխանութիւնն՝ Օսմանեան կայսրութեան հարկատու է և անոր գերիշխանութեանը ներքև, Ազգ. Վարչութեան Խառն Ժողովը պատճառ մը չտեսներ այս վիճակը Կ. Պոլսոյ Պատրիարքական իշխանութենէն անջատուած համարելու և երեսփոխանական ընտրութեանց մասնակցելու իրաւունքէն զրկելու զայն, ինչպէս չէ զրկուած այս իրաւունքէն նաև Եգիպտոսի վիճակը, որ իւր քաղաքական դիրքով Պուլկարիոյ նմանութիւնը կը բերէ, և Օսմանեան կայսրութեան հարկատու երկիր մ՚է, թէև ինքնուրոյն վարչութեամբ։

Խառն Ժողովոյ սոյն տնօրէնութիւնը հաղորդելով պատկառելի Ժողովոյդ ի գիտութիւն, Մնամք յարգանօք

Ի դիմաց Ազգ. Վարչ. Կրօն. Ժողովոյ
Բ. Ատենադպիր — Վասն Ատենապետի
Խորէն բենց — Պօղոս Վրդպտ
Փէշիմանեան — Թօրոսեանեան

Ի դիմաց Ազգ. Վարչ. Քաղ. Ժողովոյ
Վասն Ատենադպրի — Վասն Ատենապետի
Յակոբ Զօրպանեան — Ստեփան Թ. Գէյլիկեան

16 Մայիս 1879

Ի Պատրիարքարանի Հայոց
Կ. Պոլիս

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Ջեմ կարծեր որ այս խնդիրը վիճաբանութեան կարօտի որոշման յանգելու համար. և կառաջարկեմ մ'նախավճռով մ'ընդունինք զայն։ Կարսայ վիճակին, ինչպէս զիտել կուտայ Խոան ժողովը, կը դադրի այլևս Օսմանեան երկրին մաս ըլլալէ, և կը վերջանայ ընդ նմին տեղւոյն Հայ հասարակութեան իրաւունքը մեր երեսփոխանական ընտրութեանց մասնակցելու մասին։ Իսկ Ռուսճուք՝ վասն զի Եգիպտոսի նման՝ Օսմանեան կայսրութեան հարկատու է և անոր գերիշխանութեան ներքև, չկրնար ջնջուիլ մեր գաւառական վիճակաց ցանկէն և ուրեմն վիճակային Հայ ժողովուրդը կրնայ մեզի հետ միացեալ։ Արդարև Եգիպտոսի վիճակը մինչև ցարդ զանազան պատճառներով կամ թերևս գլխաւոր անկախ ենթադրելով՝ Ազգ. Ժողովին չէ ներկայացուցած իւր երեսփոխանը. սակայն զայս ևս պէտք է գիտնալ որ Պատրիարքարանի իրաւասութիւնը կը ճանչնայ և անոր հետ պաշտօնական յարաբերութեանց մէջ է միշտ։

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ. — Կը յիշեցնեմ որ Ռուսճուքի վիճակն ալ ցարդ կը թղթակցի Պատրիարքարանի հետ, և իւր ազգային գործոց կարգադրութեան համար անոր միջամտութեանը կը դիմէ։

ԱՍԼԱՆԵԱՆ Ս. ՓԱՇԱ. — Ստոյգ է որ Ռուսճուք Օսմանեան կայսրութեան մասը կըրնայ համարուիլ տակաւին, ինչպէս նաև Եգիպտոս. ստոյգ է նաև որ տեսակ մը Հայկական միութիւն հաստատուած է Ազգային Ժողովոյ միջոցաւ, որ Օսմանեան տէրութեան ներքև գտնուող մեր ազգայինները ընդ իրեարս կը ծորդէ, և պէտք է խնամ տանիլ այդ միութեան յօդակապը ամրապինդ պահելու. սակայն Եգիպտոս մեզի օրինակ է արդէն, որ Սահմանադրութեան հաստատութենէն ցարդ՝ երեսփոխան չէ տուած մեզի, չգիտենք ինչ նկատումով։ Այս մասին կը յիշէք անշուշտ որ ուրիշ անգամ մ'ալ խնդիր յուզուեցաւ. բայց յետաձգել պատշաճ դատուեցաւ։ Այս վերջի օրերս Եգիպտոս, իրմէ, Սահմանադրութիւն մը գործադրելու ելեր է, բայց այնպիսի պայմաններով և ձևով, որոց մէջ դժբաղդաբար չկրցինք գտնել երբէք սահմանադրական ոգի մը։ Ուրեմն քանի որ այդ վիճակներն ինքնին այդ միութեան շրջանակէն դուրս կելնեն, կամ թերևս կը հարկադրին այնպէս ընել, ոչ այլ ինչ կը մնայ ընել մեզ այլ ազատ թողուլ զիրենք։ Եւ ինչ շահ կըրնանք ունենալ ստիպելով զանոնք որ մասնակցին երեսփոխանական ընտրութեանց, — բաց ի ոչ ինչ։ Բայց սակայն ենթադրենք նաև որ ընտրական գործողութեանց մէջ խնդիր ծագելով միջամտել հարկ լինի Կեդ. վարչութեան. արդ՝ ո՞ւր պիտի դիմէ նա, Եգիպտական իշխանութեա՞ն, կամ Պուլկարական վարչութեա՞ն, աշխատալից բազմազխի չփոթութեանց և խառնակութեանց առիթ մը։ Ուստի լաւագոյն կը թուի ինձ ազատ թողուլ զիրենք, և ասկէ սա կը լինի մեր շահը որ չփոթութիւններէ կազատինք, և հուսկ ուրեմն երկու աթոռ կունենանք Ազգ. Ժողովոյ մէջ, և զանոնք փոխանակ թափուր պահելով այդ վիճակաց անուանը ձօնելու, գէթ Հայաստանի գաւառաց կուտանք, որով երկու երեսփոխան կունենանք աւելի՝ մեր հայրենի աշխարհէն, մանաւանդ որ յիշեցէք թէ գաւառները իրենց թուոյն մեծամասնութեամբ կեդրոնին կրկնապատիկը երեսփոխան տալու տեղ, կէսը միայն տալու իրաւունք ունին։ Իսկ մեր՝ ներկայ դրութեամբ այդ անբաւական թիւն անգամ կոխի նուազի։ Այս պարագաները աչքառութեան առնելով՝ կառաջարկեմ ի բաց թողուլ Ռուսճուք, Եգիպտոս և սանց նման գաւառներ՝ եթէ կան, և անոնց դրուած թափուր աթոռները բաժնել Հայաստանի։

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Երբ նախավճիռ կառաջարկուի խնդրոյ մը վրայ, այլ ևս երկար վիճաբանութիւնք ներելի չեն. ուստի՝ եթէ պատշաճ կը դատէք վիճաբանութիւնը չերկարելով՝ որոշենք խնդիրը նախավճռով։

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Նախավճիռ առաջարկողը խօսք ուզելու իրաւունք ունի բացատրելու համար իւր առաջարկութեան պատճառն. ուստի թոյլ կուտաք ինձ անշուշտ քանի մը խօսք ևս գրուցել այս մասին։ Ներկայ խնդրոյն մէջ ըստ սկզբան Սուեդեան Փաշա համամիտ է մեզ, և Ազգային Ժողովն իբրև Հայկական միութեան յօդակապ մը համարելով՝ կը բաղձայ զայն պահպանել բոլոր Հայաբնակ գաւառաց համար, անշուշտ երեսփոխանական ընտրութեանց մասնակցութեամբ. սակայն դժուարութիւնները մտածելով կառաջարկէ այդ գաւառները դուրս թողուլ ընտրութենէն, և երկու երեսփոխանական թափուր աթոռ շահիլ գէթ։ Երկու աթոռ շահելու համար, երկու Հայաբնակ գաւառ վտարել ի բաց՝ մեր միութեան շրջանակէն, մեր դաւանամիութեան սկզբունքին հետ չկրնար սակայն համաձայնիլ, մանաւանդ որ պարագաները աննպաստ չեն բոլորովին որ արտօրանք այսպիսի բաժանում մը ընդունելու։ Ռուսճուք, թէև այլ ևս Պուլկարական գաւառ մը, կը շարունակէ տակաւին իւր ազգային գործոց յարաբերութիւնները Պատրիարքարանի հետ, ինչպէս Ս. Նախագահը յիշեց. Եգիպտոս թէև երեսփոխան չէ տուած ցարդ՝ և Ազգային Սահմանադրութիւնն ըստ համայս ոչ լսելով՝ վարչական նորաձև կազմութիւն մը կատարեր է, սակայն Կեդր. վարչութեան հեղինակութեանը դիմելով՝ անոր հաճութեան և վաւերացման դրոշմ առնել կը նկրտի, և ազգային գործոց մասին կը շարունակէ իւր վաղեմի յարաբերութիւնն։ Այս ամեն պարագաները կը հարկադրեն զմեզ՝ զգոյշ քայլ առնել այն խնդրոյն մէջ, կամ ժամանակին բերելիք փոփոխութեանց սպասել։ Մեր քաղաքականութիւնը այս պէտք է լինի, ոչ մէկ գաւառ ի բաց չվտարել, ոչ զոր անջատել մեր միութենէն, բայց երբ անոնք բաժնուին զանազան պարագաներու հարկին ներքև և անհնար լինի մեզ իրենց ձեռքը բռնել, այն ատեն միայն թոյլ կուտանք իրենց բաժնուիլ։ Ահաւասիկ այս պատճառներով կառաջարկեմ նախավճռով ընդունիլ Վարչութեան յայտագիրն և անցնիլ։

ՇԱՀՊԱԶ Կ. ԷՖ — Խնդիրը իբր քաղաքական խնդիր խիստ պարզ է։ Սահմանադրութիւնը Տաճկաստանի Հայոց համար գրուած է և եթէ այս կամ այն գաւառական վիճակ դեղևի զայն գործադրելու, կը դիմենք իսկոյն քաղաքական իշխանութեան միջամտութեանը և կը պահանջենք որ զայն գործադրել տայ։ Պէտք է հասկնալ թէ այսպիսի պարագայի մը մէջ կրնա՞նք՝ ինչպէս Կայսերական կառավարութեան՝ նոյնպէս Պուլղարական իշխանութեան դիմել, և Սահմանադրութեան գործադրութեան համար իւր միջամտութիւնը խնդրել, ըսելով թէ Բ. Դուռը ճանչցած է այս օրէնքը, դո՛ւ ևս պէտք է ընդունիս զայն։ Ահա՛ հոս է խնդիրը։

Կը կարծեմ նաև թէ Պուլղարիա Եգիպտոսի նմանցնել շատ ճիշդ չէ նաև քաղաքականապէս. աւելի պէտք էր նմանցնել զայն Ռումանիոյ և Սերվիոյ վիճակին, որ կը գտնուէին նախ քան զպատերազմը, քան Եգիպտոսի՝ որ քաղաքական տարբեր հանգամանքներ ունի։ Ես կը կարծեմ թէ Բարձրագոյն Դուռը մեր Սահմանադրութիւնն ընդունած և վաւերացուցած ըլլալուն համար՝ Պուլկարիա պարտաւոր չէ ինքն ալ ճանչնալ զայն, և անոր գործադրութեանը սատարել։ Կը հետևցնեմ ուրեմն թէ Ռուսճուքի երեսփոխանական ընտրութիւն կատարել տալն աւելորդ է, թէ քաղաքական կացութիւնն ինչ որ է՝ անոր պէտք է յարմարիլ, թէ Քաղ. Ժողովոյ առաջարկութիւնը յարմար չեմ տեսներ, և համամիտ եմ Սուեդեան փաշայի առաջարկութեան։

ԽՍՏԻՄԱՐԱՃԵԱՆ Գ. ԷՖ. — Կը ձայնակցիմ։

ՄԵՐՍԷՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Խնդիրը քաղաքական տեսակէտով այնքան ալ պարզ լինի, տակաւին Ժողովին կարծիքը հասկցնելու համար փափուկ կէտերու պիտի ընդհարի։ Ես ալ թերևս իմ կարծիքս յայտնելու համար՝ այնպիսի բացատրութեանց մէջ մտնել հարկադրիմ որ շատ յարմար չթուին։ Արդ՝ քանի որ նախավճռի առաջարկութիւն եղաւ. կամ առանց վիճաբանութեան հարկ է

վերջացնել խնդիրը նախամտով, կամ յղել ի նախաբննութիւն։

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Երկու կերպով կը-նամ նախամտիւն ըմբռնել, ինչ սառաջարկութիւն որ՝ զայ Վարչութեան կողմէ, նոյն խնդրոյն յառակայեալ բնական Նախաձեռնութեան դիւանին կերթայ, և կամ նախամտիւ առաջարկուելով կընդունուի կամ կը մերժուի։ Նախամտիւ առաջարկուելէն ետեւ՝ պէտք է երկու երեսփոխանայ խօսք տալ թեր ու դէմ խօսելու, եթէ նախամտիւը չընդունուի պիտի երթայ Զեռնհասութեան դիւանին։

ՄԷՐԵԷՄ-ԳՈՒԼԻ Ե. ԷՖ. — Ես այնպէս կըմբռնեմ որ Ժողովը պիտի բաւարարէ թէ նախամտիւով կուզէ վերջացնել խնդիրը թէ ոչ նախաբննութեան յղել։

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այո, ճիշդ է Ձեր բացատրութիւնը։

Հետեւապէս Ատենապետ էֆէնտին քուէի կը դնէ խնդիրը և Ժողովը մեծագոյն մասամբ ԿՈՐՈՇԷ յղել զայն Նախաձեռնութեան դիւանին ի նախաբննութիւն։

Հ.

Երեսփոխանական ընտրութիւն
Վիճակին Երզնկայի

Ատենապետ էֆ. Երզնկայի երեսփոխանական ընտրութեան վերաբերեալ յետագայ գրերն ներկայեց.

Տեղեկագիր Գաւառական Ժողովոյ

Գերապատիւ Սրբազան Հայր

Ըստ հրամանի կեդր. վարչութեանդ ընդ համարաւ 137 յանցելումն օգոստոս 1 թուագրեալ գաւառական Երեսփոխանի մը ընտրութիւնը գաւառական Ժողովոյս երրորդ շրջանի եօթներորդ նիստին կատարուելով գաղտնի քուէից բացարձակ առաւելութեամբ հետեւեալ արդիւնքն ունեցած է.

Տ՚ օք. Միքայէլ էֆ.	Ռափայէլեան	7
Ռէթէոս »	Պէրպէրեան	8
Գասպար »	Զերազ	1

Եւ ըստ հրահանգի կեդր. վարչութեանդ որոշուեցաւ գրել Բաւերդու Գեր. Առաջնորդին և Ընդհ. Ժողովոյն որպէս զի իրենք ալ սոյն երեք անձանց վրայ քուէարկեն կամ եթէ զատ ընտրելի ունին նորա վերայ ալ քուէ տան և արդիւնքը յղեն առ վարչութիւն վիճակիս որ տեղեկագրեմք 'ի Պատրիարքարան միացնելով երկու վիճակաց մէջ եղած զատ զատ քուէարկութեանց արդիւնքը և ցարդ անգործադրելի մնալով չկրցանք մեր ընտրութեան արդիւնքը հաղորդել կեդրոնական վարչութեան։

Սրդ՝ քանի որ ներկայ 398 համարաւ Ձեր Սրբազնութեան մէկ նոր հրամանը Երզնկայի վիճակին համար առանձին երեսփոխան ընտրել կը տրամադրէ Բաւերդէն զատուած չինելով հետեւապէս այսօր գաւառական Ժողովս 'ի նիստ իւր իններորդ Ձեր Սրբազնութեան սոյն հրամանը 'ի նկատի առնելով իւր առաջին ընտրութեան արդիւնքը ներկայ տեղեկագրաւ յատեան Ձեր կը ներկայացնէ 'ի վաւերացումն։

1879 Ապրիլ 24

Երզնկայ	Առջնորդ. Տեղապահ
Առաջնորդարան	Տէր Յակոբ Քհնյ.
Հայոց	Դիւան Գաւառ. Ժողովոյ
Ատենադպիր	Ատենապետ
Յ. Ղուարշ	Թ. Բագրատունի

Յանձնառագիր ընտրելոյն

Գերճաշնորհ Սրբազան Հայր,

Կ՚ընդունիմ այն պաշտօն յոր կը կոչէ զիս Ազգս՝ ընտրելով զիս ազգային երեսփոխան։

Հաճեցէք, Սրբազան Հայր, ընդունիլ խորին ակնածանաց հաւատիքն։

Մնամ ամենախոնարհ ծառայ

1879 Մայիս 17 Ի. Յ. Պէրպէրեան

Յանձնագիր Քաղ. Ժողովոյ

Վսեմափայլ Ատենապետ
Ազգային Ժողովոյ

Երզնկայի վիճակին հրաժարեալ երեսփոխանին տեղ նոր ընտրութիւն կատարելու համար Պատրիարքարանի կողմէ յուղարկուած հրահանգին համաձայն՝ տեղւոյն Գաւառական Ժողովը նոր ընտրութեան ձեռնարկած, և Մեծ. Ռէթէոս էֆէնտի Պէրպէրեան Ազգային երեսփոխան ընտրած է, ինչպէս կը յայտնէ իւր ապրիլ 24 թուականաւ տեղեկագրովը։

Քաղ. Ժողովը սոյն նորընթիր երեսփոխանին ընտրելութեան պայմանները քննելով Սահմանադրութեան համաձայն կը գտնէ, և կը փութայ Երզնկայի Գաւառական Ժողովոյ ընտրութեան տեղեկագիրն՝ և ընդ նմին Պէրպէրեան էֆ.ի յանձնառութեան գիրն այսու ծանօթագրով ներկայել պատկառելի Ժողովոյդ ի քննութիւն և ի վաւերացումն։

18 Մայիս, 79 Մնամք յարգանօք

Ի դիմաց Քաղ. Ժողովոյ

Վան Ատենադպրի Ատենապետ

Գ. Գրիգորեան Ստեփան Մ. Պէյլիկեան

(Այն գրութեանց ընթերցումէն ետև.)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Պարտ կը համարիմ Ժողովիդ յիշեցնել որ Կարսոյ և Բուռնուխի երեսփոխանական ընտրութեանց նկատմամբ խառն Ժողովոյ կողմէ մատուցեալ տեղեկագրին մէջ, զոր պահ մ՚առաջ Ժողովդ Նախաձեռնութեան դիւանին յղել որոշեց, ծանուցուած էր արդէն թէ Կարսոյ երեսփոխանին պակասը լրացնելու համար՝ Երզնկայ և Բաւերդ երեսփոխանական ընտրութեան մէջ իրարմէ անջատուած, և առանձինն մէկ մէկ երեսփոխան ընտրելու իրաւունք տուած է։ Սահմանադրիչ խառն Ժողովոյ այն տնօրէնութեան համաձայն, այս անգամ Երզնկայի վիճակին առանձինն կատարած է երեսփոխանական ընտրութիւնը, որու արդիւնքը կը բերեմ մեզ կարդացուած գրութիւնները։

ԱՍԼԱՆԵԱՆ Ս. ՓԱՇԱ. — Այսպէս առաջ Բաւերդի և Երզնկայի վիճակները միացեալ կընտրէին իրենց երեսփոխանն, իսկ այս անգամ Կարսոյ վիճակը մեր ցանկէն ջնջուելն ասթիւ Վարչութիւնը նոր բաշխում մը կատարեր, և այս միացեալ վիճակներն իրարմէ անջատելով՝ իրաւունք ընծայեր է անոնց առանձինն մէնմի երեսփոխան ընտրելու։ Սահմանադրական արդէն Վարչութիւնը պարտաւոր ունի ամեն երկու տարին անգամ մը Ցեռուշ խորհրդոյ առենապետներուն հետ մէկտեղելով՝ Հանրաբարեկարգ Ժողով կազմել, և ամեն թապի և գաւառի կողմէ քանի երեսփոխան տրուելիքը որոշել. հետեւապէս Վարչութեան այս նոր բաշխման անարդիւնութիւնը իւր պաշտօնին հետ համաձայն է կատարելապէս. և խնդրոյ ներքև չմնար։ Իսկ եթէ անոր բերած յայտագիրը Նախաձեռնութեան դիւանին յղել որոշուեցաւ, Կարսոյ երեսփոխանին խնդրոյն համար չէր այն, այլ Բուռնուխի և Եդիպատոսի խնդրոյն համար, որոց բաժանումը խնդրոյ նիւթ եղաւ։ Կարսոյ կառաջարկեմ Երզնկայի երեսփոխանարան ընտրութիւնը առանց վէճի ընդունիլ։

Այն ընտրութեան դէմ ոչ ոք դիմաղրութիւն տեղի չունենալով Ատենապետ էֆէնտի քուէի դրաւ զայն, և Ժողովը միաձայնութեամբ անոր օրինաւորութիւնը հաստատելով՝ ՎԱՒԵՐԱՑՈՒՑ և Ազգ. երեսփոխան ՀՌՉԱԿԵՑ։

Ռէթէոս էֆ. Պէրպէրեան։

Ը.

Ելմտացոյց կեդրոնական սնտուկի
Ներկայ 79—80 տարւոյ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Դիւանն ուրախու-թեամբ կը յայտնէ որ Քաղ. Ժողովը Կեդրո-նական սնտուկի Ելմտացոյցը ծրագրեր բերեր է, և կարծեմ թէ այս առաջին անգամն է, որ Ազգ. Ժողովն իր բացման երկրորդ նիս-տին զայն պատրաստ կը գտնէ իր սեղանին վրայ: Ահաւասիկ կը ներկայեմ ձեզ Քաղ. Ժողովոյ յայտագիրը:

Վսեմափայլ Ատենապետ
Ազգային Ժողովոյ.

Քաղ. Ժողովս հրահանգ ընդունե-լով Ազգային Ժողովէդ՝ ներկայ 79-80 տարւոյ համար իր արդէն մատուցած Ելմտացոյցը որ թղթադրամի վրայ հիմ-նեալ էր, մէճիտիէ դրամի վրայ ի նորոյ պատրաստելու, փութայ ըստ այն հրա-հանգի կատարել այն աշխատութիւնը և ահաւասիկ յատուկ տեղեկագրով մը կը մատուցանէ զայն Պատկառելի Ժողո-վոյդ ի քննութիւն և ի վաւերացումն:

Մնամք յարգանօք
ի դիմաց Քաղաքական Ժողովոյ

Վաւ Ատենադպիր — ՅԱԿՈԲ ԶՕՊԱՆԵԱՆ
Վաւ Ատենապետ — ՍՏԵՓ. Մ. ՊԷՑԼԻԿՃԵԱՆ

17 Մայիս 1879
ի Պատրիարքարանի Հայոց
Կ. Պոլիս

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կուզէ՞ք որ Ելմտա-ցոյցին տեղեկագիրն ալ կարդացուի:

ՁԱՅՆԵՐ. — Ո՛չ, ո՛չ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Որովհետև Համարակա-լութեան դիւանին կը յղեմ խնդիրը, միայն սա տեղեկութիւնը կուտամ ձեզ թէ Ելմտա-ցոյցը արծաթ դրամ 540 հազար զրշի վրայ հիմնեալ է:

ԱՍԼԱՆԵԱՆ Ս. ՓԱՇԱ. — Հաճեցէք նաև ըսել թէ սնտուկին ելևմուտքը հաւասարա-կշռեա՞լ է:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այո՛, 540 հազար զրուշ ելք և նոյն քանակութեամբ մուտք նը-շանակուած է:

Ահաւասիկ Ելմտացոյցին հետ կցորդուած տեղեկագիրը:

Յօդուած Ա.

Պատրիարքարանի 1879-80 ամի ներկայ Ելմտացոյցն ըստ յանձնարարու-թեան Ազգային Ժողովոյ արծաթ մէճի-տը 20 զրշի հաշուոյն վերածուեցաւ:

Յօդուած Բ.

Պատրիարքական թոշակը նոյնու-թեամբ՝ այն է՝ ամսական 5000 զրշ. և տարեկան 60.000 զրշ պահել արժան դատուած է:

Յօդուած Գ.

Պաշտօնէից թոշակը՝ ըստ որոշման Ազգային Ժողովոյ՝ էր ամսական 15.300 և տարեկան 183,600 զրշ. այժմ կոտո-րակի մասը զեղչելով՝ ամսական 15.000 և տարեկան 180.000 զրշ նշա-նակել արժան դատուած է, ի միասին հաշուելով նոր յաւելնալիք պաշտօնէից և արդէն եղածներուն թոշակաց վերադ-րելի գումարն, ինչպէս նաև Բ. Դրան սենեկապանի ամսականը:

Յօդուած Դ.

Նպաստի ամսականաց մէջ նախկին Քափուքէհեասի ծերունի Ալիքսան էֆ. Արդումանեանի 400 զրշ ամսական նշա-նակուեցաւ, փոխանակ 500ի:

Նոյնպէս Պէպէքի Տէր Ռուքիաս քահանային 400 փոխանակ 150ի:

ԵԼՄՏԱՑՈՅՑ

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՄՆՏՈՒԿԻ

1879-1880 ԱՄԻ

ԱՐԾԱԹ ՄԷՃԻՏԸ 20 ՂՐՈՒՇԻ ՀԱՇԻՒՎ.

ՀԱՍՈՅԹՔ

Ազգային տրոց կեդրոնական մասը	150.000
Դիւանական տուրք. Առաջնորդական վիճակաց (Մուգաթա)	100.000
» » Եկեղեցեաց Կ. Պոլսոյ (Քանչելէր)	30.000
[illegible]. Առուծախէ	90.000
» » Ճանապարհորդներէ	25.000
Նշանտուութիւն	60.000
Պսակագրութեան հրամանի	20,000
Դիւանական հասոյթ	8,000
Դատական վճռագրի հասոյթ	7,000
Դրոշմաթուղթ	1.500
Զանազան արտաքոյ կարգի հասոյթ և նուէր	22.000
Կոնդակագին	4.000
Ջնտանի հասոյթ	2.500
Ծննդոց և վախճանմանց վկայագրի հասոյթ	20,000
	540.000

ԾԱԽՔ

Թոշակ. Պատրիարքական ամսական 5000 Տարեկան	60.000
» Պաշտօնէից » 15,000 »	180,000
Նպաստ Ալիքսան էֆ. Արզումանեանի » 400 } 600 »	
» Պէպէքի Տ. Սուքիաս Հօր » 100	7.200
» Պուրկազի քահանային » 100	
» Ջնտանի բանտարկելոց	2.500
» Հիւանդանոցի	55.000
Դաստիարակութեան պիտոյից ծախք	50.000
Գաւառական այցելութեանց և հովուութեանց ծախք	50.000
Դիւանական ծախք. Գրական պիտոյք	7.000
» » Թղթատար և հեռագիր	10,000
» » Լրագրաց բաժանորդութիւն	5.000
» » Տպագրութիւն	12.000
[illegible]. Երթևեկութիւնք Պատրիարքական	20.000
» Տօնական պարգև (բէմազանիյէ)	1.500
» Երթևեկութիւնք բարապանաց	4.000
Ընդհանուր ծախք. Կարօտելոց նպաստ և անցագիր	6.000
» Կարասիք և նորոգութիւն	10.000
» Հանդերձագին բարապանաց և սեննեկապանաց	6.000
» Փայտ, ածուխ, սուրճ, շաքար, մոմ ևն.	10,000
» Նշանի տուփ, խաչ, կոնդակ (կէսը)	4.000
» Զանազան ծախք մանունք	5.800
Պահեստի գումար	34.000
	540.000

Ի դիմաց Քաղաքական Ժողովոյ

Վ. ատենապետ
ՅԱԿՈԲ ԶՕՊԱՆԵԱՆ

Վ. ատենադպիր
Ս. Մ. ՊԷՅԼԻԿՃԵԱՆ

Նոյնպէս Պուրկազի քահանային 100 փոխանակ 150 ի։

Ընդ ամենը տարեկան 7,200 ղրշ։

Յօդուած Ե.

Ջնտանի բանտարկելոց համար 2,500 ղրշ. ծախք նշանակուեցաւ, որ եթէ Մայրաքաղաքիս եկեղեցիներէն ամբողջ չհաւաքուի իսկ, անտուկը կարօտելոց սահմանեալ բաժնէն պիտի ընու պակասը։

Յօդուած Զ.

Նպաստ Հիւանդանոցի նշանակուեցաւ 55,000 ղրշ. Ազգահամարի գրասենեակին ճամբորդներէ ենթադրեալ 25,000 ղրշ ամբողջ և նշանաուութեան համար ենթադրեալ հասոյթին կէսը 30,000 ղրուշ։

Յօդուած Է.

Դաստիարակութեան համար պիտոյք բաղում են թէև, սակայն առայժմ 50,000 ղրշ. տարեկան ծախք նշանակեալ արժան դատուեցաւ, իբրև հասութից ընդհանուր գումարին 1/10ը։

Յօդուած Ը.

Գաւառական այցելուաց պիտոյքն յայտնի է, մանաւանդ թէ անցեալ տարի ի Հայաստան հանուած այցելուներէն ստիպողաբար առաջարկեալ, այսպէս նաև գաւառներ կան՝ որ ոչ թէ կեդրոնական անտուկին տուրք տալու, այլ կեդրոնական անտուկէն օգնութիւն վայելելու պէտք ունին. մանաւանդ քրիստոնեաց սահմանակից գաւառներն, որոնց հովութիւնն ալ ծախուց կը կարօտ. ուստի 50,000 ղրշ. նշանակել արժան դատուեցաւ, իբրև հասութից ընդհանուր գումարին 1/10ը։

Յօդուած Թ.

Դիւանական ծախուց մէջ գրական պիտոյից համար Ազգ. ժողովն 12,000 ղրշ. թղթադրամ նշանակած էր, այս գումարն 7000 ղրշի վերածել արժան դատուեցաւ, համեմատութեամբ նախորդ տարիներու ներկայ պիտոյքը նըկատողութեան առնլով։

Թղթատարի և հեռագրի համար Ազգային ժողովն 10,000 ղրշ թղթադրամ նշանակած էր, այժմ միևնոյն գումարը նշանակուեցաւ, որ համեմատութեամբ թղթադրամին՝ թէև աւելի կերևի, բայց թղթատարութեան մասին դուրուշի հաշուով տարբերութիւն մը չկենալուն պատճառաւ և տարուոյն պիտոյից նայելով այդ գումարին պէտք կայ։

Լրագրաց բաժանորդութեան համար Ազգային ժողովն 16,000 ղրշ. թղթադրամ նշանակած էր. զոր 5000 ղրոշի դրամի զեղչել արժան դատուեցաւ։

Տպագրութեան ծախք Ազգային ժողովն 17,000 ղրշ թղթադրամ նշանակած էր. այժմ 12,000 ղրշ նշանակուեցաւ, որ արդարև համեմատութեամբ թղթադրամին աւելի է. բայց ոչ համեմատութեամբ ներկայ պիտոյից և ծախուց։

Յօդուած Ժ.

Բարաբերութեան ծախուց մէջ Սրբազան Պատրիարք Հօր երթևեկութեան ծախուց համար Ազգային ժողովն 22,000 ղրշ. թղթադրամ նշանակած էր. այժմ 20,000 ղրշ. նշանակել

արժան դատուեցաւ փոխանորդ Սրբազանին երթևեկութեան ծախքն ալ ի միասին հաշուելով :

Ցօնական պարգևի մասը նոյնութեամբ 1500 ղրշ. նշանակուեցաւ :

Բարապանաց երթևեկութեան ծախքը նոյնութեամբ 4000 ղրշ. նշանակուեցաւ :

Յօդուած ԺԱ.

Ընդհանուր ծախուց մէջ կարօտելոց նպաստ և անյայտ նոյնութեամբ 6000 ղրշ. նշանակուեցաւ :

Պատրիարքարանի կարասեաց և նորոգութեան համար ծախքը նոյնութեամբ 10.000 ղրշ. նշանակուեցաւ , քարուղիր սենեկին համար ստիպողական նորոգութեան ծախքն ընդունելով , որպէս զի պահեստի դիւանատուն մը լինի այն ,

Բարապանաց և սենեկապանից հանդերձանքի համար Ազգային ժողովն 10.000 ղրշ. թղթադրամ նշանակած էր . այժմ 6000 ղրշ. նշանակել արժան դատուեցաւ , 5 բարապան , 2 սենեկապան , 1 դռնապան և 1 քարուղարտուղարի . ընդ ամենն 9 անձանց համար Ջամալեան մէկ ձեռք զգեստ , իսկ եաստաքճիներուն համար ձմրան ---- և ամառն երկու անգամ ալ կօշիկ հաշուելով :

Փայտ , ածուխ , խահուէ , շաքար , մոմ և այլ այս տեսակ ծախուց համար Ազգային ժողովն 18,000 ղրշ. թղթադրամ նշանակած էր . այժմ 10.000 ղրշ. նշանակել արժան դատուեցաւ , ներկայ գնոց բարձրութեան պատճառաւ :

Նշանի տուփի , խաչի , կնդրակի ծախք Ազգային ժողովն 8000 ղրշ թղթադրամ նշանակած էր . այժմ 8000 ղրշ. արծաթ դրամ նշանակուեցաւ , այս նիւթերուն նախկին վիճակը կարելի եղածին չափ պահելու համար : Սոյն ծախուց կէսը Հիւանդանոցի սնտուկի պատկանելուն . 4000 ղրշ միայն կեդրոնական սնտուկին համար նշանակուած է :

Զանազան մանր ծախուց համար Ազգային ժողովը բան մը նշանակած չէր . բայց այժմ 5,800 ղրշ. նշանակել արժան դատուեցաւ , քանզի կարելի չէ ծախուց մէջ այս մասը անտես առնել :

Յօդուած ԺԲ.

Թէ չնախատեսուած ծախուց և թէ ենթադրեալ հասութից նուազման պատահականութիւնները դիմաւորելու համար 34.000 ղրշ. պահեստի գումար նշանակուեցաւ :

Յօդուած ԺԳ.

Ըստ այսմ 1879-80 ամի ելմտացոյցին ծախուց բովանդակ գումարը կ'ըլլայ 540,000 ղրշ :

Յօդուած ԺԴ.

Կեդրոնական ուղղակի տուրք տարեկան 150.000 ղրշ կեդրոնական սընտուկին համար ենթադրել արժան դատուեցաւ , նկատելով նախորդ տարիներու մէջ գանձեալ գումարները , ինչ որ ալ ըլլան նոր հաստատելի սըրոց կանոնադրին տալիք դիւրութիւնները , տակաւին ներկայ տարւոյն համար այդ մասին աւելի ընդարձակութիւն ունենալ ենթադրելէ զգոյշ պէտք է լինել . մանաւանդ անոր համար որ օրէն է Ելմտացոյցին ծախքերն քիչ մը

աւելի , իսկ հասութից մասը նուազ ենթադրել :

Յօդուած ԺԵ.

Առաջնորդական վիճակներէն կեդրոնական սնտուկին համար ներկայ տարւոյն մէջ հաւաքելի Դիւանական տուրքը (Մուգաթա անուն) 100.000 ղրշ որոշել արժան դատուեցաւ : Ազգային ժողովոյ մէջ այս տրոց բաշխման մասին Վարչութեան նախորդ առաջարկութեան վրայ եղած դիտողութիւնները նկատողութեան առնլով , յիշեալ գումարին վրայ նոր բաշխումը Վարչութիւնն ինք կատարելու համար Ազգային ժողովէն արտօնութիւն կը խնդրէ .

Յօդուած ԺԶ.

Կ. Պօլսոյ եկեղեցիներէն կեդրոնական սնտուկին համար ներկայ տարւոյ մէջ հաւաքելի Դիւանական տուրք (Փանչէլէր անուն) 30.000 ղրշ որոշել արժան դատուած է . Մուգաթային համար եղած դիտողութեանց համաձայն ասոր ալ նոր բաշխումը կատարելու համար նոյն արտօնութիւնը խնդրելով :

Յօդուած ԺԷ.

Ազգահամարի դրամենեակին առուծախի վկայագրէ 90.000 ղրշ ենթադրեալ է նախկին տարիներու համեմատութեամբ : Սոյն հասութին՝ ինչպէս նաև յետագայ անուղղակի տրոց հասութից գանձման մանրամասն պայմաններն անուղղակի տրոց կանոնագրի ծըրագրով պիտի մատուցուին Ազգային ժողովոյ :

Իսկ Ազգահամարի դրամենեկին ճամբորդներէն հասոյթ 25.000 ղրշ ենթադրեալ է , արդէն հաստատեալ սովորութեան համաձայն գանձելու արտօնութեամբ :

Յօդուած ԺԸ.

Նշանտուութեան հասոյթ ըստ նախկին հասութից 60.000 ղշ ենթադրեալ է :

Յօդուած ԺԹ.

Պսակագրութեան հրամանի հասոյթ ըստ նախկին հասութից 20.000 ղշ. ենթադրեալ է :

Յօդուած Ի.

Դիւանական հասոյթ ըստ նախկին հասութից 8.000 ղրշ ենթադրեալ է :

Յօդուած ԻԱ.

Դատական վճռագրի հասոյթ թէև ըստ նոր կարգադրութեան աւելի մեծ գումար ենթադրել կարելի է , բայց առ այժմ 7000 ղրշ նշանակել բաւական կը համարուի :

Յօդուած ԻԲ.

Դրօշմաթղթի հասոյթ ըստ նախկին հասութից 1500 ղրշ. կենթադրի :

Յօդուած ԻԳ.

Զանազան արտաքոյ կարգի հասոյթ և նուէր ըստ նախկին հասութից 22.000 ղրշ կարելի է ենթադրել , Ազգ. ժողովոյ ատենադրութեան և այլ պաշտօնական հրատարակութեանց հասոյթներն ի միասին հաշուելով :

Յօդուած ԻԴ.

Կոնդակագին կարելի է ենթադրել 4000 ղրուշ :

Յօդուած ԻԵ.

Ջնտանի հասոյթ ըստ նախկին հա-

սութիւն 2.500 դրշ ենթադրեալ է Մայրաքաղաքիս եկեղեցիներէ։

Յօդուած ԻՁ.

Մենդոց և վանականաց վկայագրի հասոյթ ըստ առաջարկելի նոր կանոնին ներկայ տարւոյ համար 20.000 դրշ կարելի է ենթադրել, որովհետև պէտք է որ այս անուղղակի տուրքն ընդհանրանայ։

Յօդուած ԻԷ.

Ըստ այսմ բովանդակ հասոյթ կենթադրի 1879—1880 տարւոյ համար 540.000 դրուշ, որով ծախքը դիմաւորուած է։

Ե.

Առաջարկութիւն Գրիգոր Գրանագիսեանց Էֆ.ի

Դորընթեր երեսփոխան Այտպեան Էֆ.ի կողմէ մատուցեալ յետագայ առաջարկութիւնը կարդացուեցաւ.

Ազնիւ Տեարք

Ինչպէս անհատի նոյնպէս ազգերու նիւթական կացութիւնը բարոյականին վրայ մեծ ազդեցութիւն ունի, ասի առնուրանալի ճշմարտութիւն է։

Արդարեւ մեր ազգն սահմանադրապէս բաւական յառաջադիմեց, դպրոցներն սկսան արդիւնք արտադրել. սակայն բաւական ուշադրութեան արժանի ցաւալի կէտ մը կայ, այդ ալ անուրանալի է, այդ կէտն ազգին նիւթական վիճակն է, որ խիստ տխուր և թախիծ տեսարան մը կը ներկայէ։ Ազգին ներկայացուցիչներն այդ վիճակին դարման մը պարտին խորհիլ և ազգը փրկել։

Ես միջոց մը խորհեցայ զոր պատկառելի ժողովոյդ ուշադրութեանը կը յանձնեմ։ Կ'առաջարկեմ որ Ազգային ժողովոյ հեղինակութեամբը և իր վերին հսկողութեան տակ ազգային ընդհանուր բաժանորդագրութիւն մը բացուի, գոյացած գումարները կարող և ձեռնհաս անձանց յանձնուին. դրամագլուխներու վերածելով ազգին անգործ և կարօտ երիտասարդաց գործ բանալու նպատակաւ։ Այս կերպիւ Ազգին քսակէն ելած դրամն յ'ումպէտս չ'վատնիր այլ կ'արդիւնաւորի և միանգամայն վարժարաններէ անդադար դուրս ելլող ուսեալ երիտասարդք վաճառականութեան մէջ կը զարգանան և ընտանիքներ կը կանգնեն։

Ցոյներն և Եբրայեցիք մեր ազգին ձեռքէն ամեն գործ առնելու վրայ են, եթէ բոլորովին չառին, մեր ազգի երիտասարդք ատոնց պիտի սպասաւորեն, եթէ գարման մը չ'խորհուի։

Այս առաջարկս ոչ թէ միայն Հայ երիտասարդաց գործ հայթայթելու համար կընեմ այլ և ազգին վերածնունդը պատրաստող դաստիարակութեան մեծ գործին աղբիւրներ ճարելու համար ըրած եմ. Այդ վաճառատուններն որ Ազգին սեփականութիւնը պիտի լինին, ինչ շահ որ արտադրեն, ազգին դաստիարակութեան և ազգօգուտ ձեռնարկութեանց կրնայ յատկանալ։ Այս բաժանորդագրութիւնը որ հետզհետէ մեծ կարեւորութիւն պիտի ստանայ, կրնայ Եբրայական Ալիանսի դերը խաղալ և Ազգին հոգի և կեանք տալ, չեմ հաւատար որ Հայ արիւնը կրող մէկը զայն մերժելու չափ սիրտը կարծրացնէ. առերկմիտ եմ որ այս ամենօգուտ միջոցաւ մեծամեծ գումարներ կը հանգանակուին և քիչ ատենուան մէջ հազարաւոր վաճառատուններ կը բացուին։

Ես իմ զգացմանցս վրայ չափելով այդ նուիրական նպատակն ունեցող բաժանորդագրութիւն մը ոչ թէ կը մերժեմ այլ կաղաչեմ որ բաժինս ընդունուի։

Ազնիւ Տեարք, Ազգն իր վերածնունդեանը համար սիրտն ու քսակը բացած է, մեծին և փոքրին. հարուստին և ազքատին սրտերն միեւնոյն զգացմամբ կը բաբախեն. օգուտ քաղենք Ազգին պատրաստականութենէն և իրական արդիւնքներ յառաջ բերելու համար ձեւ և ուղղութիւն տանք հայրենասէր զգացմանց։

Ազգն իր ներկայացուցիչներէն կ'սպասէ իր փրկութեան միջոցն. Ազգային ժողովն կոչում ունի հեղինակել զայն և ամեն ազգօգուտ ձեռնարկ իր վերին պաշտպանութեան տակ առնուլ։

Ազնիւ Տեարք, ահաւասիկ այս է իմ առաջարկս, զայն պատկառելի ժողովոյդ բարձր ուշադրութեանը կը մատուցանեմ, որպէս զի եթէ արժան է, իր իմաստութեամբն յարդիւնս ածէ յօգուտ և 'ի փրկութիւն Ազգիս։

Ճնամ սիրելի Ազգիս անձնուէր ծառայ

'ի 18 Մայիս 79 Գրանագիսեանց Գ. Գրիգորեան

Խոսգիւղ

ԱՏԵՆԱՊԵՏ Էֆ. — Մեր ազնիւ պաշտօնակցին սոյն առաջարկը Ժողովին ներկայացնելէ ետև կը փութամ յայտնել նաև որ զայն պէտք է յղել ձեռնհաս դիւանին ի նախաքննութիւն։

ՍԷՐՎԻՏԷՆ Էֆ. — Այս առաջարկն Ազգային Ժողովոյ մէջ մտնելու հանգամանք չունի, այլ անհատական ձեռնարկութեանց վերաբերելի գործ մ'է պարզապէս. բայց Ազգային ժողովը կրնայ բաջալերանք կանգնիլ, այդ ուրիշ խնդիր։

ՇԱՀՊԱԶ Կ. Էֆ. — Մեր Պաշտօնակցին բերած առաջարկութեան ոգին թէև խիստ գովելի է, բայց ինչպէս Սերվիչէն Էֆ. իրաւամբ առարկեց, Ազգ. Ժողովոյ շվերաբերիր։ Մանաւանդ որ ըստ իս առաջարկութեան հիմքն ալ էրօնոմի բոլիթիգի (քաղաքական տնտեսութեան) սկզբան հակառակ է, ուստի աւելորդ կը թուի ինձ զայն նախաքննութեան յղել։

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Գ. Էֆ. — Առաջարկը նախաքննութեան յղելու համար սրգելը մը չեմ տեսներ, և ինչ որ է մեր կարծիքը, ձեռնհաս դիւանին տեղեկագիրը գալէ ետև կրնանք յայտնել և այս նիւթին վրայ խօսիլ։ Միայն ուրիշ դիտողութիւն մ'ունիմ, զոր այս առթիւ պարտ կը համարիմ յառաջ բերել։ Երբեմն մեր առաջնորդներու բերանէն օտար լեզուէ բառեր կը հնչուին, որոնց փափաքելի է որ այս կէտին տակաւ ինչ ուշադրութիւն ընծայուի. և մեր ազգային լեզուն գործածուի թէ Ազգ. Ժողովոյ գրութեանց, և թէ առեւնարարութեանց մէջ։

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. Էֆ. — Խօսք ուզելի առաջարկելու համար որ Ազգ. Ժողովը նախագահով վերջացնէ խնդիրը, շնորհակալութիւն յայտնելով հեղինակին աշխատութեանը համար, և առաջարկութեան գործադրութիւնը յանձնարարելով անհատական ջանից։

[Հաւանութեան նշաններ]

Ատենապետ Էֆ. Նախագահի առաջարկը քուէի կը դնէ, և Ժողովը միաձայնութեամբ ընդունելով զայն, կը յանձնարարէ խնդիրը

անհատական ջանից գործադրութեանը, ըստ առաջարկութեան Սերվիչեն էֆէնտիի։

ՕՐԱԿԱՐԳ

Ա.

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ՆԱԽԱՔՆՆԻՉ ԴԻՒԱՆԱՑ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ատենական գործողութիւններն սարքելուն, և աշխատանքի Օրակարգն ունինք մեր առջև։ Երկու խնդիր կայ, առաջինը Նախաքննիչ դիւանաց ընտրութիւնն է, բայց չգիտեմ պատճառ մը կը տեսնէ՞ արդեօք Ժողովը յաջորդ խնդիրը նախադասելու, և նախամեծար մը զայն ընդունելէ ետև՝ կատարելու Նախաքննիչ դիւանաց ընտրութիւնը։

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Օրակարգը ջնջելու հարկ չկայ երբէք, և բնական է որ կատարուի կանխաւ Նախաքննիչ դիւանաց ընտրութիւնն, որ այս նիստին համար ժողովին սահմանելու մէկ աշխատութիւնն է։

[Համաձայնութեան նշաններ]

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Շատ աղէկ, պէտք ունինք ուրեմն այժմ դիւանաց ընտրութեան։ Աշխատանաց խորհրդանիշ դիւանի համար ընտրելոց ընդհանուր ցանկ մը, զոր ըստ ներքին կանոնագրի Մայր դիւանը պատրաստած է։ Երեսփոխանք պարտաւոր չեն սակայն հետևիլ անպատճառ այս ցանկին, այլ իրաւունք ունին ուզած անուննին ջնջել և ուրիշը նշանակել տեղը։ Այժմ կը հրաւիրեմ երեսփոխան էֆէնտիները պատրաստել քուէարկութեան։

Անմիջապէս պատրաստուած ցանկերը ցրուեցան երեսփոխանաց, և քուէհամարի քննիչ կարգեցան պարոնք.

Տ. Յակոբ վրդ. Աշտ Փափազեան
Տ. Իգնատիոս " Շիշէճեան
Տօքթօր Սրբունի էֆէնտի
Օտեան Նշան "

որոց հսկողութեան ներքև քուէարկութեան և քուէհամարի գործողութիւնները կատարուեցան ատ ժամուն։ Հետևեալս Աւետիսեան էֆ. քուէհամարի արդիւնքը ներկայացնելով ժողովին, կարդաց ընտրելոց անունները ըստ յետագայ ցուցակի։

ՁԵՌՆՀԱՍՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

Խորէն Արքեպիսկոպոս Նար-Պէյ
Յովհաննէս Քհ. Մկրեան
Տիգրան էֆ. Եուսուֆեան

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

Սերվիչեն էֆէնտի
Ստեփան Փաշա Ասլանեան
Գասպար էֆ. Ջերազ

ԿԱԽՈՒԱԾՈՑ ԴԻՒԱՆ

Մինաս էֆ. Գարամանճեան
Յովհաննէս էֆ. Կրճիկեան
Արիս էֆ. Ունճեան

ՀԱՄԱՐԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

Ստեփան էֆ. Փափազեան
Քրիստոստուր էֆ. Ղազարոսեան
Համբարձում էֆ. Մազլումեան

ՑԱՐԱԲԵՐՈՑԹԵԱՆ ԴԻՒԱՆ

Մկրտիչ էֆ. Լատեան
Բարսեղ էֆ. Հայաճեան
Պօղոս էֆ. Պառնասեան

ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

Ներսէս Վրդ. Ալանեան
Ս. Ալթուն Տերրի էֆ.
Նշան էֆ. Օտեան

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

Տօքթ. Ռափայէլեան էֆ.
Յ. Մերեէմ-Գուլի էֆ.
Միհրան էֆ. Զօպունեան

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

Կարապետ էֆ. Ս. Իւթիւճեան
Գարեգին էֆ. Մելիքեան
Համբարձում էֆ. Ալահճեան

Այն ընտրութիւնը, որ 58 երեսփոխանաց մասնակցութեամբ կատարուած էր, ՎԱՒԵՐԱՑԱՒ ժողովէն, և ընտրեալք Նախաքննիչ դիւանաց անդամ ՀՌՉԱԿՈՒԵՑԱՆ։

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ահաւասիկ աւարտեցաւ Նախաքննիչ դիւանաց կազմութիւնը. կը մնայ այժմ խորհրդարանիս դիւանի իր ատենապետն որոշել, որպէս զի Ատենապետաց դիւանը գումարելով պատրաստէ նախագահական ճառին ի պատասխան գրուելիք ուղերձը։ Բայց վասն զի Ազգ. ժողովոյս առաջին ատենապետին աթոռը թափուր է, այս պատճառաւ անշուշտ հարկ պիտի լինի ուղերձին խմբագրութեան գործը յետաձգել, մինչև որ ատենապետի հրաժեշտին խնդիրն իր լուծումը գտնէ։

Բ.

ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ ԵՐԿՈՒՑ ԵՐԵՍՓՈԽԱՆԱՑ ՎԱՍՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՔՆՆԻՉ ՅԱՆՁՆԱԽՄԲԻ ՔՆՆՉԱՑՆ Ի ՀԱՅԱՍՏԱՆ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կարգն եկաւ այժմ Օրակարգին միւս խնդրոյն։ Կը յիշէք անշուշտ որ երկու երեսփոխանք ժողովոյս նախընթաց բացման ՃԹ. նիստին մէջ առաջարկած էին որ յանձնախումբ մ'ընտրուի, ազգին կողմէ երբեմն գաւառները ղրկուած քննչաց ընթացքը և գործառնութիւնները քննելու պաշտօնով։ Ազգ. ժողովն այս առաջարկութեան ընդունելութիւն ընծայելով՝ օրակարգն անցուցած է զայն, որ այսօր աշխատանաց Ձեր առջևւան կը ներկայանայ։ Ինչ կարծիք ունիք այս մասին. նախամեծա՞ր կ'ուզէք ընդունիլ զայն, թէ ոչ՝ վիճաբանելու պէտք կը տեսնէք։

ԱՍԼԱՆԵԱՆ Ս. ՓԱՇԱ. — Խնդիրը վիճաբանութեան կարօտութիւն չունի. և թէ Օրակարգն անցած է առարկայաբար, ոչ թէ ըստ ինքեան վիճաբանութեան նիւթ ըլլալու համար, այլ պարզապէս առաջարկեալ Քննիչ յանձնախմբին ընտրութեան համար է։ Սակայն կը յիշէք անշուշտ որ ժողովս այս խնդրոյն մէջ առջի փոյթերանէն յատուկ դիտում մը, ոգի մը նշմարեց, և անոր համար ընդգրկեց զայն. կ'ուզեմ փոքրիկեան մը Ձեր ուշադրութիւնը, մանաւանդ մեր նորընտիր ընկերներուն ուշադրութիւնը հրաւիրել այն կէտին վրայ։

Ազգ. Ժողովը երբ իմացաւ որ Բ. Դուռը Պէռլինի դաշնագրոյն Հայկական յօդուածին գործադրութեան իբր սկզբնաւորութիւն, նոյն դաշնագրին Ռումէլիի վերաբերեալ մէկ ուրիշ յօդուածոյն տրամադրութեան համեմատ Քօմիսէրներ կը ղրկէ ի Հայաստան, շուտով և չէր կրնար անտարբեր մնալ, և իբր ներկայացուցիչ Ազգին ընդհանրութեան՝ փութաց իր մէջէն Յանձնախումբ մ'ընտրել և պաշտօն յանձնեց նմա իր կողմէն խմբագրել Հայաստանի բարեկարգութեան և բարենորոգմանց խնդիրը և դաշնագրոյն 61րդ յօդուածին կատարեալ գործադրութեան հսկել։ Այս Յանձնախումբը բարենորոգմանց հիմնադրին խմբագրութեան համար Միջազգային դեսպանական կամ գէթ Խառն Յանձնաժողով մը գումարել տալու աշխատութիւն և խնամք պիտի տանէր ի Հայաստան ղրկուած Քօմիսէրներուն գործոց վրայ հսկողութիւն ընելու և եթէ պէտք տեսնէր, նաև իր կողմէն ալ Ազգին կողմէն մասնաւոր պաշտօնակալներ անկողմնակալ ղրկէր անոնց ընթերակցելու, մերոնց առաջնորդելու, գեղծմանց և հարստահարութեանց բարձման համար տեղւոյն պաշտօնէից, և անկեալին զօրավիգն ըլլալու և վերջապէս Հայկական խնդրոյն ըստ իրաւանց Ազգին՝ լուծմանն հոգ տանելու պաշտօնով։

Այս միջոցին էր որ ներկայացաւ ժողովիս երկուց երեսփոխանաց առաջարկութիւնն որ առկէ առաջ զանազան ժամանակ զանազան կողմեր ի դիմաց Ազգին կամ յանուն Ազգին ի դիմաց Տէրութեան ղրկուած Քննիչներուն գործոց համարատուութիւնը կը պահանջէր և ժողովս նկատելով որ մինչև ցայսօր այն համարատուութիւնը չէ կրցեր կատարուիլ, վասն զի Սահմանադրութեան հաստատութենէն ի վեր գրեթէ և ոչ միանգամ՝ օրինաւորապէս

համարաւութիւն եղած է Վարչական մարմնոց գործառնութեանց, և ըստ որում այսպիսի համարաւութիւն մը կրնար օգտակար ելլել արդի պարագայից մէջ հետեւելիք ընթացքի նկատմամբ, իսկոյն ընդունեց առաթայից նկատմամբ զոյն Օրակարգն անջարկութիւնն և անցուց զոյն Օրակարգն անյապաղ քննիչներն ընտրելու դիտմամբ, այս էր ոգին առաջարկութեան և այս նպատակ Ազգային Ժողովին ըրած ընդունելութեան. Ազգային թէ՛ չ՝ մէկուն մտքէն անցած չէ զրկապա թէ՛ չ՝ մէկուն մտքէն անցած չէ զրկուած քննչաց գործերը պատասխանել կամ անձինքը գատաստանելու սուրբ ձեռք բերել, ինչպէս որ կարծողներ գանուեցան Ժողովէս դուրս։

Այդ՝ քանի որ օգտակար ճանչցուած է առաջարկեալ քննութիւնը, ժամանակ կորուսանելու հարկ չկայ անոր վրայ վիճաբանելով ընդերկար. որոշենք անմիջապէս համարաւութեան եղանակը և անցնինք մեր ուրիշ կարեւոր գործոց. այսու մտոք կառաջարկեմ որ փոխանակ նոր մասնախումբ մ՝ընտրելու՝ որ թերևս դժուարութեանց կրնայ մեզ ընդհարկանել, յանձնենք այս գործը Խորհրդարանական Յանձնախմբին և Մայր դիւանի անդամց որ Փոխանորդ Սրբազանին նախագահութեամբ ամենայն ինչ քննեն և իրենց պատասխանեմամբ ամենայն ինչ քննեն և իրենց պատասխանեմամբ դատած միջոցին՝ տեղեկագիր բերեն մեզ բոլոր նախկին քննչաց ի Հայաստան ուղղորելոց պաշտօնավարութեան ամեն մէկուն գործերն ու վարմունքն և անոնց հետևանքը ի յայտ ածելով ըստ պատշաճի։

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. Է. — Իրրեւ առաջարկութեան տէր խօսք ուզած էի, բայց Սահման փաշայի բացատրութենէն ետև՝ որ գեղեցիկ կերպով պարզեց խնդիրն, աւելորդ կը համարիմ խօսիլ, և կը յայտարարեմ միայն թէ կընդունիմ իր եզրակացութիւնը։

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Գ. Է. — Ես ալ միեւնոյնը կըսեմ, և կառաջարկեմ որ խորհրդարանական Յանձնախմբին յանձնուի գործը։

ՄԷՐԵԷՄ-ԳՈՒԼԻ Ե. Է. — (Այնդամ խորհրդարանական Յանձնախմբին) Սահման փաշայի առաջարկութիւնն էր գործին աշխատութիւնը Մայր դիւանին և խորհրդարանական Յանձնախմբին յանձնել. իսկ Բրիստոս-տուր էֆէնտին զոյն բոլորովին Յանձնախմբին վրայ կը ծանրաբեռնէ։ Սակայն Յանձնախումբը իր պաշտօնին յատուկ գործերուն այնքան պաշարեալ է, և այնքան շարաչար ըղբաղեալ, որ անոր այսպիսի նոր աշխատութիւն մ՝ալ վերագրելը, թերեւս արգել լինի իր միւս գործոցը։ Այս կէտը պէտք է յիշատակեմ, որպէս զի երբ Ձեր նոր յանձնարարութեան կատարումն՝ եթէ ոչ բոլորովին ետ մնայ, գէթ յապաղի, Յանձնախումբը չմեղադրեք ի վերջէ։

ԱՍԼԱՆԵԱՆ Ս. ՓԱՇԱ. — Եթէ մարմին մը կայ՝ որ ամենէն աւելի յարմարութիւն և միանգամայն պէտք ունենայ այս խնդրոյն մէջ մտնելու և տեղեկութիւններ քաղելու, խորհրդարանական յանձնախումբն է այն, որու պաշտօնին բնութիւնը կը մղէ զինքը այս աշխատութիւնն ստանձնելու։ Եթէ Մայր դիւանը ուզեր թօթափել զայն ի բաց, թերևս կարենայի համոզուիլ, սակայն խորհրդարանական Յանձնախումբին համար՝ երբէք, պէտք է որ անպատճառ ստանձնէ նա՝ գործը։

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Գ. Է. — Ինչպէս շատ իրաւամբ առարկեց Սահման փաշան նոր մասնախմբի մը ընտրութիւնը կրնայ դժուարութեանց տեղի տալ։ Գիտենք մենք թէ խորհրդարանական Յանձնախումբը ինչ ոգով կաշխատի, և զայս դիտնալով կը պահանջենք որ անպատճառ իրեն յանձնուի գործը։ փոյթ չէ եթէ Մերեէմզուլի էֆէնտիի ըսածին պէս տակաւ ինչ ուշանայ տեղեկագիրը, կըրաւէ միայն որ յանձնախմբին բովէն անցնելով գայ մեզ։

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. Է. — Միթէ գանգատած ենք ուրիշ ատեն Յանձնախմբին դէմ որ իրեն վրայ մեղադրանք չհրաւիրելու համար չհամիր հաւանիլ գործը ստանձնելուն, մեր վստահութիւն մեծ է իր վրայ և այս պատճառաւ կուզենք որ այս քննութիւնը ինք կատարէ։

ՁԱՅՆԵՐ. — Բաւէ, բաւէ։

ԱՏԵՆԱՊԵՏ Է. — Շատ աղէկ, բայց որոշակի գիտնալու համար թէ ժողովը կուզէ՞ տակաւին վիճաբանութիւնը շարունակել թէ ոչ, բաւէ պիտի դնեմ նախ վիճաբանութեան փակումը։

Հետեւապէս Ատենապետ էֆէնտին բաւէ կը դնէ վիճաբանութեան փակումն և ժողովը միաձայնութեամբ կընդունի զայն։

ԱՏԵՆԱՊԵՏ Է. — Կը մնայ այժմ գիտնալ թէ խնդրոյն մէջ քանի տարբերութիւնք կան կարծեաց։ Սահման փաշայի կարծեաց և առաջարկին յարեցան նոյն իսկ քննիչ յանձնախմբի մը կազմութիւնն առաջարկող երկու երեսփոխանք, սա տարբերութեամբ որ Բրիստոստուր էֆ. գործը միայն խորհրդարանական յանձնախմբին յանձնուելու կողմն էր, իսկ նոյն յանձնախմբին կողմէ Մէրեէմ-Գուլի էֆէնտին անոր ծանրաբեռնելու վիճակը մէջ կը դնէր իրր՝ արգելք մը այս նոր գործն ստանձնելու։ Եթէ կը ներկայ ինձ, երկու խօսք պիտի ընեմ այս մասին, թէեւ դիւանին վրայէն չունիմ իրաւունք մասնակցելու խնդրոյն վիճաբանութեանը։ Այս խնդիրը խորհրդարանական յանձնախմբին յանձնելը շատ բնական և բանաւոր է, և Սահման փաշա՝ իրր վարչական ատենապետ իր բացատրեալ փարձառութեամբը շատ իրաւամբ առարկեց թէ գործը՝ խորհրդարանական յանձնախմբին պաշտօնին բնութեան յարակից է, և Մայր դիւանն, ըստ, եթէ չմասնակցի այս գործին. թերևս հաստոյգ. իսկ խորհրդարանական յանձնախումբն անպատճառ պէտք է այս գործին մէջ։ Շատ ճշմարիտ է այս և բաւ իս բացատրակապէս պէտք էր գործը յանձնել այս Յանձնախմբին, առանց Մայր դիւանին մասնակցութիւնն ալ փնտռելու։

ԱՍԼԱՆԵԱՆ Ս. ՓԱՇԱ. — Որովհետև վիճաբանութեան փակումէն ետև՝ նոր առաջարկ մը ըրիք, չենք կրնար զայն անպատասխանի թողուլ, ներեցէք ուրեմն որ վիճաբանութիւնը վայրկեան մը կրկին բանալով երկու բառ պատասխանեմ։ Խորհրդարանական յանձնախումբը քաղաքական պարտք կը կատարէ հրաժարում խնդրելով, և Մայր դիւանն ալ անոր օրինակին կը հետեւի։ Սակայն երկուքն ալ պէտք է գտնուին այս գործին մէջ, յանձնախումբն անոր համար՝ որ իր պաշտօնին բնութեան յատուկ է գործը, Մայր դիւանն անոր համար՝ որ թերևս յայտնուին այնպիսի եղելութիւններ, որոց հրատարակումն առ ժամս արժան չդատուի, և այն ատեն գէթ մայր դիւանը ժողովոյ կողմէ փոխանորդաբար տեղեկութիւն ստանայ անոնց վրայ։ Ուստի, կը կրկնեմ, խորհրդարանական յանձնախումբն, և մայր դիւանը միանալով Սրբազան նախագահին հետ պէտք է այս աշխատութիւնը կատարելու շնորհ ընեն։

Ատենապետ էֆէնտին առաջարկութիւններն երկուքի բաժնելով՝ բաւէ կը դնէ զատ զատ և նախ երկու երեսփոխանաց պահանջած քննութեան գործը խորհրդարանական Յանձնախմբին յանձնելու առաջարկը, զոր ժողովը միաձայնութեամբ կընդունի։ յետոյ բաւէ կը դնէ նաև Մայր դիւանին յանձնախմբերին հետ գործակցելու առաջարկը, զոր նոյնպէս ժողովն միաձայնութեամբ ընդունելով, ԿՈՐՈՇԷ որ Յանձնախումբ և Մայր դիւան ըստ առաջարկութեան Սահման փաշայի միանալով Պատրիարքական փոխանորդին հետ՝ Վարչութեան ատենագրութիւններէն պէտք եղած քննութիւնն ընեն և տեղեկագիրը բերեն։

Յառաջիկայ նիստը 15 օրէն դումարել կորոշուի, և դիւանը կը յայտարարէ թէ նոյն նիստին Օրակարգը պիտի սահմանուի, «Տեղեկագիր Համարակալութեան դիւանին ի վերայ ելմտացոյցի» իսկ եթէ ատենապետի խնդիրն ալ գայ Ժողովին, պիտի անցնի նոյնպէս Օրակարգը։

ԱՍԼԱՆԵԱՆ Ս. ՓԱՇԱ. — Ելմտացոյցի խնդիրն ի՞նչպէս կանցնէք Օրակարգն, երբ եկած չէ Համարակալութեան դիւանին տեղեկագիրն. եթէ գայ իսկ. տակաւին պէտք է

ժամանակ տալ մեզ զայն ուսումնասիրելու և պատրաստուելու համար։

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. Է. — (Անդամ նորակազմ Համարակալութեան դիւանի) Ելմտացոյցի խնդիրն նոր չէ Ազգ. ժողովին համար, այլ տակէ շորս ամիս առաջ եկած է և Ազգ. ժողովն զայն նկատողութեան առնելով մինչեւ իսկ ծախուց մասը քուէարկած է. իսկ ի վերջէ Վարչութեան յանձնած է մէջիսիէ դրամի վերայ զայն ի նորոյ սրատրաստել, և ահաւասիկ Վարչութիւնը ժողովին այս յանձնարարութիւնը կատարելով բերած է պահանջուած Ելմտացոյցը։ Համարակալութեան դիւանի տեղեկագիրը պիտի գոյ անշուշտ ձեզ յառաջիկայ նիստէն յառաջ, որպէս զի ժամանակ ունենաք ուսումնասիրելու, և վասն զի նոյն դիւանին անդամ՝ ընտրելու պատիւն ըրիք ինձ, և ես անծանօթ չեմ գործին սոսկալիութեանը, ուստի կը յայտարարեմ որ դիւանը պիտի աշխատի իւր տեղեկագիրը հասցնել։

ԱՍԼԱՆԵԱՆ Ս. ՓԱՇԱ. — Բաւական է որ նիստի օրէն զէթ երեք օր առաջ հանի մեր ձեռքը և եթէ կխոտանաք, շատ աղէկ։

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. Է. — Եթէ ինձ կը հարցնէք, մինչեւ յառաջիկայ նիստ՝ եթէ ութն օրուան միջոց ըլլար, տակաւին կրնար հասնիլ։

Հարցումն Քափամաճեան Մինաս էֆէնտիի

Քափամաճեան Մինաս էֆէնտիի կողմէն յետագայ հարցումը կարդացուեցաւ.

«Ստոյգ է որ Մշոյ վանահայր Մամբրէ եպիսկոպոս հակառակ վարչութեան քանիցս հրաւիրանաց, ցարդ կը յապաղէ Պոլիս գալ»։

ՆԱԽԱԳԱՀ ՍԲԲԱՂԱՆ. — Այս հարցման պատասխանը կրնայ տրուիլ անմիջապէս։ Կարմինէն եկած վերջին հեռագիր մը ծանուցանէ թէ Մամբրէ եպիսկոպոս մեկնած է ութսի՝ Պոլիս գալու համար։

Ատեանը վերջացաւ ժամը 10 ին։

Ատենադպիր Ատենապետ

Մ. Ց. ՄԷԼԻՔԵԱՆ Տ. ԵՈՒՍՈՒՖԵԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՀԱՄԱՐԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆԻ

Ի ՎԵՐԱՑ ԵԼՄՏԱՑՈՑՑԻ ԿԵԴՐ. ՍՆՏՈՒԿԻ

Վսեմափայլ Ատենապետ
Ազգային ժողովոյ

Համարակալութիւն Դիւանս ըստ յանձնարարութեան Ազգ. ժողովոյ քննութեան առնլով Վարչութեան մատուցած 1879—80 ամի Ելմտացոյցն ու անոր Տեղեկագիրը, տեսաւ որ Վարչութիւնն յիշեալ Ելմտացոյցին դումարները արծաթ մէճիտի վերածելու մասին Ազգային ժողովոյ ըրած նոր յանձնարարութենէն առիթ ստանալով, նախորդ Համարակալութեան դիւանի դիտողութիւնները նոյնպէս և ժողովին մէջ Երեսփոխանաց ըրած առաջարկութիւններն ու յայտնած կարծիքներն ուշադրութեան առեր և ըստ այնմ այդ նոր Ելմտացոյցը պատրաստեր է. հետեւաբար Դիւանս իւր քննութեան մէջ բարեփոխութեան արժանի կէտ չգտնելով ի նմա, կը փութայ Վարչութեան մատուցած Ելմտացոյցն ու անոր տեղեկագիրն իւրացնել և Ազգ. ժողովոյ քննութեան և վաւերացմանը ենթարկել. յիշեցնելով թէ՝ քուէարկելի այդ Ելմտացոյցին մէկ ամիսն արդէն անցած է, և թէ՝ սրչափ շուտ վաւերանայ, այնչափ դիւրութիւն պիտի տրուի Վարչութեան ընթացքին։

25 Մայիս 1879 Ատենապետ

Գ. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ

Ատենադպիր և Տեղեկաբեր

Ս. Գ. Գ. ՓԱՓԱԶԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

1	Տ.	Մկրտիչ	Ս.	Արքեպս. Խրիմեան	Ա. Ատենապետ
2	Տ.	Խորէն	Ս.	» Նարս-պէյ	
3	Տ.	Կարապետ	Ս.	Եպս. Սերովբեան	
4	Տ.	Մատթէոս	Ս	» Իզմիրլեան	Բ. Ատենապետ
5	Տ.	Ամբրոսիոս	Ծ.	Վրդ. Ռուբինեան	
6	Տ.	Գարեգին	Ծ.	» Թաթարեան	
7	Տ.	Եղնիկ	Ծ.	» Ամատունի (Ամաջն. պաշտօնիս դուրս գայած)	
8	Տ.	Իգնատիոս	Ծ.	» Շիշէճեան	
9	Տ.	Հմայեակ	Ծ.	» Դիմաքսեան	
10	Տ.	Ներսէս	Ծ.	» Աղջանեան	
11	Տ.	Պօղոս	Ծ.	» Խօրոամեան	
12	Տ.	Արիստակէս	Ս.	Աղա Քէնդ. Մամբրէեան	
13	Տ.	Խորէն	»	Փէհլիվանեան	Բ. Ատենադպիր
14	Սահակ	»	»	Տ. Սարգսեան	Ա. Ատենադպիր

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎ

1	Աբրահամ	Էֆէնտի	Աթոն Տիրրի	Ա. Ատենադպիր
2	Գէորգ	»	Սիխմարաճեան	Ա. Ատենապետ
3	Գէորգ	»	Գրիգճեան	
4	Գաբրիէլ	»	Եսայեան	
5	Լեւոնիդէս	»	Պալեօղեան	
6	Արմ.	»	Կիւլպէնկեան	(Հրաժարեալ)
7	Մարտիրոս	»	Միւհէնտիսեան	
8	Մկրտիչ	»	Ֆրէնկեան	
9	Յակոբ	»	Զօսպանեան	
10	Ղազարոս	»	Հովսեան	
11	Սահակ	»	Ղազարոսեան	(Հրաժարեալ)
12	Յակոբ	»	Մերունեան	
13	Ստեփան	»	Պէյլիկճեան	(Հրաժարեալ)
14	Խաչատուր	Խան	Տ. Ներսէսեան	Բ. Ատենապետ

ԳԻՆ Հ ԴՐՈՒՀ

ՍԵՓՀԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՄԱՏՈՒԿԻՆ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ ԾԱԽՈՒՑ ԲԱՏԿԱՅԵԱԼ

Կը ծախուի ի Դիւանատան Պատրիարքարանին, և Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ Եկեղեցւոյ բանկալը և Հայ գրավաճառաց քով։